

Բաֆֆի ՏՆԱՅԻՆ ՓԵՍԱ

Ա.

Գարնան թարմ և փափուկ երեկոներից մինն էր: Արևի վերջին ճառագայթները դեռ ոսկեգոծում էին Կազբեկի ձյունապատ գագաթը: Ժամատներից լսելի էին լինում մեզմբարեպաշտական հնչումները՝ զանգահարության: Հավլաբարի պառավ կնանիքը, ծածկված իրանց սպիտակ չարսավներով, շտապում էին աղոթելու:

Նույն ժամուն Դուրկալենց Շուշաը, թևերը ծալած, կաբայի փեշքերը գոտկումը խրած, լվացքի լազանը ձեռին, դուրս եկավ յուր փոքրիկ տնակի դռանը, և նայելով յուր չորս կողմն, երբ տեսավ անցնող չկա, շուտ տվավ լազանն յուր դռան առջև և սապնախառն ջուրը սպիտակ պղպջակներով անհետացավ փոշիներով պատած գետնի մեջ:

Փողոցի մյուս ծայրից երևեցավ պառավ Մաքթաղը, ձեռին բռնած մի քանի հաստ մոմ: նա յուր հետ բերում էր յուր ջուխտակ թոռնիկներն, որոնց ամեն մինը նույնպես բռնած ունեին մի մի հաստ փոքրիկ մոմեր:

— Ու՞ր ես եղենց շտապով գնում, Մաքթաղ շան, — հարցրուց նրանից Շուշանը, լազանը դնելով գետին:

— Փեթխահինն իմ գնում, Շուշան շան, օղորմած կենա, գնում, իմ համբուրելու, — պատասխանեց Մաքթաղը ջերմեռանդությամբ:

— Էրնե՛կ քիզ, Մաքթաղ, վուր վուխտ ունիս համբուրելու, ես կի՛ մեր սուրբ Մինասն էլ չիմ կանացի գնա:

Վերջին խոսքը չորս եկավ Մաքթաղին, և նա զարմանալով հարցրուց.— Ի՞նչի, քա՛ : Գանա կիրակնամուտ գիշերին էլ յի՛ տ կու նընկնին ժամիցը:

— Է՞հ, ինչ անիմ, Մաքթաղ շան, խղճութիւնը դժա՛ր բան է, — հոգոց հանելով պատասխանեց Շուշանը: — Էսօր առուտեմեն կցած մատնիրս տրորվեցան շատ լվացք անելեմեն: Իմ Նատոն էլ ջիր չի պոծի ութո քսելը:

Լսելով Նատոյի անունը, մի նոր միտք ծագեց Մաքթաղի գլխում: Նա փոխեց յուր խոսքը:

— Լավ արիր, վուր միտս բերիր, ասա՛, թե քու աստուծը կու սիրիս, ո՞վ է էն ջեկ տղեն, վուր չուստ չուստ ձիր տունն է գալիս:

Շուշանը փոքր ինչ շփոթվեցավ.

— Ղարիբ օքմին է, Մաքթաղ շան, էնպես գալիս է էլի՛, խան լվացք է բերում, խան կարկատան է բերում, շատ գամ էլ գալիս է էնպես խոսելու:

— Ո՞վ է, վո՞ւր տղանցի է:

— Ղարաբաղցի է, Մաքթաղ ջան, մինձ մարթու վուրթի է՝ կի՛: Ինքն ասում է, վուր հերն էնդի մելիք է. շատ փուղ ունի, ասում է, բաղ, բաղչա, մուլքեր ունի, կոսե:

Այդ խոսքերը շարժեցին Մաքթաղի զարմացքը:

— Լա՛վ, — ասաց նա, — թե վուր Էդենց մարթու վուրթի է, բաս ինչի է մ իր քաղքամը պարապ թրն գալիս:

— Չիմ իմանում, Մաքթաղ ջան, իրան վուր հարցնում իս, ասում է միթոմ հորմեն խոովիլ է ու միք քաղաքն է Էկի: Հերը կի՛ հենց մի գլուխ գրում է՝ վուրթի ջան, հերի՛ք մնաս դարիբ երկրումը, թո դ արի՛, տուն ու տեղիդ տիրութին արա. ամա ինքն կի չէ գնում:

— Բաս էստեղ ի՞նչ պիտի շինի:

— Ասում է մաղազիա պիտիմ բաց անի, վուր լավ՝ լավ ապրանքնիր ծախեմ:

— Իժում փող ունե՞:

— Հիմի չունե, ամա ասում է, էնքան կու մնամ, ինչկլի հերս մեռնի, իժում կեհամ, նրա մուլքերը կու ծախիմ փող կու շինիմ:

Մաքթաղի խոժոռ դեմքի ծալքերը շարժվեցան մի հեգնական ծիծաղով: — Էդ լա՛վ բան է, Շուշան ջան, բաս դու աղոթք արա, վուր շուտ մեռնի:

— Վո՞ւնց թե աղոթք անիմ, — շփոթվելով հարցրուց Շուշանը:

— Էլ ի՛նչ ասիլ կուզե, պիտի աստծուն աղաչանք անիս, վոուր մուրազիդ շուտ հասնիս...

Շուշանը ձևացրուց դժգոհության նշաններ: — Ի՞նչ մուրազ, ինչե՞ր ես խոսում, Մաքթաղ, — խոսեց նա երեսը շուռ տալով:

Գանա չիմ գիտի, վուր ուզում իս Նատոյիդ էն տղին տա, վուր տանու

փ է ս ա1 շինիս:

— Չէ՛, խաչը գիտենա:

Մաքթաղը շարունակեց յուր ճանապարհը, ասելով. — ինձ Ձիկլոինց Մաքթաղ կոսին: Մաքթա՛ղ, չի՞ ս գիտի վուր ծտերն ինձ համա խաբար ին բերում:

Շուշանը ոչինչ չպատասխանեց, մտավ տունը:

Բ

Մի նեղ բակ երկու փոքրիկ սենյակներով, շրջապատած տախտակամածով, ներկայացնում էր այն տնակն, ուր ներս մտավ Շուշանը: Այդ բնակարանը նրան չէ պատկանում, այլ վարձած էր խիստ թեթև ամսականով:

Բակի մի անկյունում ուրազը ձեռին գործում էր մի հյուսն: Նա կամ տաշում էր, կամ մեխում էր և հարմարեցնում էր տախտակները: Նայելով նրա ձյունի պես սպիտակ մազերին՝ նրան կարելի էր համարել վաթսուն տարեկան ալևոր, բայց մարմնով նա տակավին առողջ էր, ժիր և գործունյա: Նրա երեսի խոշոր գծագրությունն՝ յուր տխուր արտահայտություններով՝ բոլորովին համապատասխանում էր յուր կոշտ արհեստին: — Նա դագաղ շինող էր:

Ուստա Գրիգորն — այդպես էր նրա անունը — Շուշանի ամուսինն էր: Նրա մոտ անհամբեր դեմքով կանգնած էր մի մշեցի համալ հսկայական հասակով և շտապեցնում էր շուտ վերջացնել դագաղը

Հավա՛ր, բաբո, թեզ արա՛, խըլսուն է, տասը քափեկս կկորի, — անդադար կրկնում էր մշեցին յուր հայրենական բարբառով:

— Հե՛յ, Թումաս աղա, դու չմեռնեիր, մշեցին չէր կարող տանել քո տասը կոպեկը... — բացականչեց հյուսնը շարունակելով յուր գործը:

Աստված օղորմի անոր խոգուն, — ասաց համալը:

— Աստծու ողորմությունը թո՛ղ նապաստակի նման նրա գերեզմանի վրիցը թռչի, — կտրեց մշեցու խոսքն ուստա Գրիգորը:

— Ի՞նչու, աղեկ մարդ մը չէ՞ր Թումաս աղան:

— Լավ էր նրանով, որ շուտ մեռավ: Աղվեսն էն ժամանակն է պետք գալիս, երբ որ սատկում է:

— Թումաս աղան ասա՞նկ մարդ էր, — հարցրուց մշեցին:

— Հա՛: Այս շաբաթ մի քանի այդպիսիների համար դագաղ շինելու բախտն ունեցա, մինն եկեղեցո գանձապետ էր, մինն՝ հացի փողորտղչիկ, բայց մյուսը՝ վաշխառու: Ա՛խ, որքա՛ն ուրախ բանում է իմ ուրագն, երբ որ այդպիսիների համար դագաղ է շինում:

— Երբ մեռնողս ա՞ղեկ մարդ է:

— Այն ժամանակ ես ուրախ չեմ, ինչպես քանի օր առաջ շինեցի մի դագաղ վարժատան աշակերտի համար:

Ծերունի հյուսնի ուշադրությունը գրավեց տխուր երգի ձայնն, որ լսելի էր լինում փոքրիկ սենյակիս:

«Ես սրտումս դարդ ունեմ,

«Փշով պատած վարդ ունեմ,

«Մերի՛կ, մերի՛կ, քռռանաս,

«Ես ատելի մարդ ունեմ՝

Այդ նրա դստեր՝ Նատոյի ձայնն էր, որ նույն ժամուն ութո էր քաշում և երգում էր:

— Նատո՛, Նատո՛, — ձայն տվեց ծերունին:

— Ի՞նչ է, հայրիկ, — լսելի եղավ մի քնքուշ ձայն:

— Ե՛կ էստեղ:

Էս նիմուտին, հայրիկ, մի շաբիկ է մնացել ութոյելու:

Շուտով հայտնվեցավ սենյակի դռանը մի բարձրահասակ օրիորդ՝ թուխ աչքերով, սև մազերով, վարդ թշերով: Նա յուր հասակի այն տարիներումն էր, երբ կուսական գարունքը դեռ նոր սկսել էր ծաղկել յուր ջերմ մանկական թարմությամբ:

— Ե՛կ դագաղի խուփը մախմուրով պատե, զանջիրաները մեխե, ծաղիկները կպցրու: Դրանք քո գործն է, — ասաց աղջկան հայրը:

— Է՛հ, հողեմ նրա գլուխը, ծաղիկներ էլ պիտի կպցնեմ, — պատասխանեց Նատոն դժգոհությամբ:

— Այդպես են պատվիրած, որդի:

— Հայրիկ, այն ժամանակ տուր ինձ վարդեր շաբեմ, երբ ջեհելի համար է դագաղը:

— Այդ փառքը հարուստներին է, որդի, նրանք մեզ նման աղքատներից խլած փողերով իրանց դագաղն են զարգարում...

— Կրո՛ղը տանե նրանց, ի՞նչու են էդպես անում:

— Որ էն կինքումը սատանաները հոտ քաշեն:

— Ով գիտի, ուրախանում կլինեն սատանաներն, երբ որ էդ ծաղիկները կտեսնեն. էնպես չէ՞, հայրիկ, — հարցրուց Նատոն ինքն ևս մի առանձին ուրախությամբ նայելով նրանց շքեղության վրա:

— Էդ բոլորը կերեն դժոխքումը, — պատասխանեց հայրը:

— Վա՛յ, կերե՞ն... — կրկնեց Նատոն սարսափելով:

— Բա՛ւ, երում են երբ որ դագաղը հ ա ր ա մ փողով է շինվում, — վերջացրեց ծերունին:

— Երբ որ հ ա լ ա լ փողով է շինվում, էն ժամանակ ի՞նչ են անում:

— Մուս կա՛ց, Նատո, շատ բան որ սորվես, շուտ կպատվես, — ասաց նրան հայրը, շարունակելով յուր գործը:

Նատոն լռեց և, առնելով մի փոքրիկ մուրձ, սկսեց օգնել յուր հորը:

Գ

Օրը կիրակի էր: Արեգակի ճառագայթներն ուրախ ժպիտով խաղում էին Շուշանի տան կոտրատված ապակիների հետ: Վաղորդյան զեփյուռը ծավալվում էր փափուկ և հովասուն թարմությամբ:

Մանկահասակ աղջիկները, զարդարված տոնական հագուստով, որը կանգնած էր իրանց դռան շեմքի վրա՝ գաղտուկ նայում էր փողոցում անցուդարձ անողներին, ժպտում էր և թաքցնում էր յուր գլուխն, երբ որ մի սղամարդ էր գալիս: Որը դեռ չէր հեռացել հայելուց, կոկում էր յուր դեմքը և դարդարում էր իրան: Ոմանք՝ հավաքելով իրանց կտուրների վրա, կամ նեղ բակերի մեջ՝ մի խումբ մեծ և փոքր աղջիկներ, դայիբա և դիպիլիպիտոն էին ածում, տաշի խփում և հերթով պար էին գալիս: Ամեն տեղ տիրում էր ուրախություն, լսելի էին լինում ծիծաղ և հանաքներ: Իսկ Նատոն միայնակ և լուռ նստած էր յուր փոքրիկ սենյակում, նրա տխրամած դեմքը չէր ցույց տալիս ոչինչ ուրախություն:

Նույն միջոցին ժամիցը ետ դարձավ նրա մայրը, Շուշանը, և տալով աղջկան մի պատառ նշխարք, ասաց.

— Վա՛, աղջի, ջեր շուրերդ չե՞ս հագի:

— Է՛հ, ինչի համար հագնեմ... — պատասխանեց օրիորդն երեսը շրջելով:

— Դու էլի լացել ես, աչքերդ կարմրել են:

— Չեմ լաց էլի, գլուխս է ցավում:

— Հիմա էլ աչքերումդ արտասուք կա, ինչու՞ ես ինձ խաբում:

— Չեմ գիտում... — պատասխանեց օրիորդը տխրությամբ:

— Էլի իծանիրդ մո՞տ ին էլի:

Նատոն ոչինչ չպատասխանեց և կամենում էր սենյակից դուրս գնալ:

— Արի՛ չարսավս ա՛ռ, — կանչեց նրա մայրը:

Նատոն առեց չարսավը, ծալեց մի կողմ դրեց և սկսավ մոր համար թեյ ածել: Շուշանը նստած էր փոքրիկ տախտի վրա լուսամուտի հանդեպ:

— Ջոււմշուղ՝ բեկը Էսօր չէ՞ եկել, — հարցրուց նա: Այդպես կոչվում էր նրանց դարաբաղցի փեսացուի անունը: Իսկ Նատոն, փոխանակ ուղղակի պատասխանելու, հարցրուց. — Դեղի, ինչ կլի ե՞ փ Էդ տղեն մեր տուն պիտի գա ու գնա:

— Հուղե՛մ քու տուտուց գլուխը, — պատասխանեց Շուշանը հեզնական ժպիտով. — միթո՞ւմ դու ուրախ չե՛ս, վուր նա գալիս ու գնում է...

— Ի՞նչ ունիմ ուրախանալու... հարևաններն ինչ ասիս ինձ վրա ին ասում... ամենի բերնի՛ մաստաքն ես իմ դառի...

— Նրանց աչքն Էլ տրաքի՛, — բարկանալով պատասխանեց Շուշանը:

Այդ խոսակցությանը վրա հասավ ուստա Գրիգորը: — Լավ ես ասում, ա՛ կնիկ, ախար բանը բանի նման չէ, է, հարևաններն ի՞նչ մեղք ունեն, որ բամբասում են...

Շուշանն ավելի բարկանալով կտրեց ամուսնի խոսքը.

— Ա՛ մարդ, էդ քու խելքի բանը չէ՛, ծիտը ձիվ մե դափասիս մեջն իմ ձգել, հիմի դուն ուզում իս թոցնի՞ ...

— Դուն, դեղի, — մեջ մտավ նատոն արտասուքը սրբելով, — դուն իմ բողազը պիտիս դուս կտրի վունց որ տեհնում եմ...

Օրիորդը Էլ չսպասեց պատասխանի, սենյակից դուրս եկավ:

— Իմ հոգին գիտենա, դրուստ է ասում Նատոն, — ասաց ուստա Գրիգորն աղջկա դուրս գնալուց հետո: — — Ջեր չնշնած տղին ախար վո՞ւնց կուլի տուն թողնել, գանա էդ քաղաքի նամուսը ձիվ գնացե՞լ է:

— Լավ ես ասում, Գրիգոր, — կտրեց Շուշանն ամուսնի խոսքն. — ես Էլ գիտեմ, վուր էդենց է, ամա անիծվի՛ հիմիկվա աղաթը... Ի՞նչ անեմ, վո՞ւր ջուրը նրնկնեմ... Աղջիկս հասիլ է, մոտ տասնութը տարեկան է դառի, հիմա մարդու տալու վախտն է: Մենք երկուսս Էլ աղքատ մարդիք ենք. դու ձիվ կարում ես քու ուրագով միը օրական հացը դադել: Ես Էլ, տեհնումիս ինչպես չարչարվում իմ ջեր էս ամսվա տան քրեհը չիմ կարացի տար: Տանտերն ամեն օր գլուխս տանում է, փուղ է ուզում: Դե՛, արի դու փուղ ու բաժինք բե՛ր, վուր աղջիկդ իրա ուզած մարդին տաս: Վո՞ւր տեղից պիտի բերես: Ու առանց փուղ ու բաժինքի էլ, դու գիտես, վուր մեր քաղքումն աղջիկ չին ուզում: Անիծվի՛ էդենց աղաթը... Հիմա ծիվ մե խամ օքմին իս գթի, դարիք աղա է, էստեղի աղաթը չէ իմանում. ասում է, Նատոն սիրուն է, ես առանց փուղի էլ կու պսակվիմ: Հիմա դուն ինձ ասա՛, ա՛ մարդ, կուլի՞ վուր էդ թավուր տղին մեր ձեռնեմեն թոգ տանք:

Շուշանի այդ երկար մոնտրոգը դարձյալ չկարողացավ հանգստացնել նրա ամուսնին և նա պատասխանեց.

— Էդ ամենը դրուստ ես ասում, Շուշան, ամա դուն էն ասա՛, թե կնկան ի՛նչով պիտի պահե. դուն մեկ մութթա փեսա ես գթի, վուրի ջիբերը գլխիցը ավելի դատարկ է:

— Ի՞նչ է ասում, քա՛, ախար փուղավոր մարթու վուրթի է, հորես հերը կու մեռնի ու դովլաթն իրան կու մնա, — ասաց Շուշանն ինքնաբավական հուսով:

— Բայքա շուտ չմեռավ:

— Չմեռավ մինք կու պահենք, տանու՛ փեսա կշինենք:

— Էդ լավ է՛... — հեգնորեն պատասխանեց ուստա Գրիգորը: — Թե վուր վատ ըլի ինձանից պահանջի, — ասաց կինը, — դուն գործ չունիս:

— Ես չնշնված տղին իմ տուն չեմ թողնի:

— Իմ ուզածն էլ էղի է գալի, է՛, ախար, ա՛ մարդ, դուն չես թողնում, վուր էս բանը գլուխ բերեմ:

— Ես էդ գործեմեն իմ ձեռնձրը լվացի, էս կնկտերանց բազառին խառնվելու գլուխ չունիմ, — ասաց ուստա Գրիգորը և սնից դուրս գնաց, մոտեցավ մի խումբ մարդիկների, որոնք մի պատի ստորոտը նստած, արևի շվաքի դեմ, զրից էին անում:

Դ

Իսկ Նատոն, դուրս գալով սենյակից, երկար գլուխը ձեռքին հենած, խորին տխրության մեջ, նստած էր իրանց բակի ցածրիկ պատի հովանվո ներքև մի տախտակի վրա, երբ ներս մտավ նրանց դրացի Քեթոյի աղջիկը՝ Նինուցին:

— Ի՞նչ կու տաս, վուր ասիմ, թե ո՛ւմ վրա էիր փիքը անում, — ծիծաղելով ասաց Նինուցին և նստեց Նատոյի մոտ:

— Է՛հ, Նինուցի, էրնե՛կ քիզ, վուր դարդ չունես ու Էդպես կանացիլ իս ծիծաղել, — խոսեց Նատոն գլուխը բարձրացնելով:

— Ե՛ս դարդ չունեմ... դո՛ւն չի՛ս պիտի ունենա, դո՛ւն...

— Ի՞նչի:

— Նրա համար, վուր Գիգոլին քիզ սիրում է:

— Ի՛նչ անիմ, վուր սիրում է... — կրկնեց Նատոն սառնությամբ:

— Էլ ի՞նչ պիտիս անի, սարսաղ, մե Էնթավուր սիրուն, ջեհիլ տղեն վուր աղջկան սիրում ըլի, նա Էլ դա ըդ կունենա...

— Բա՛ս չի՛ ունենա...

— Է՛հ, հուզե՛մ քու տուտուց գլուխը... ինքն Էլ չի գիղի ի՛նչ է խոսում, — պատասխանեց Նինուցին քոքոլա տալով Նատոյի երեսին:

Նատոն բոպեական մտածությունից հետո պատասխանեց յուր ընկերուհուն. — Դուն փո՛ւղ ասա, փո՛ւղ, անխի՛ք, հիմա միր սիրելն ո՞վ է հարցնում...: Հազար կուզե աղջիկը սիրե, հազար կուզե տղեն սիրե, ո՞վ է այնումը գցում: Նրանք էնեց կու մաշվին, էնեց կա մեռեին ու իրանց սերն էնեց գերեզմանը կտանին, ու զովրը փուղավորին է մնում...

— Անիծվի՛ էդեց աղաթը, — պատասխանեց Նինուցին դեմքը խոժոռելով:

Նատոն ոչինչ չպատասխանեց, նրա գունատ դեմքի վրա արտահայտվում էր սրտի բոլոր հուզմունքը:

— Ամա դուն էն ասա՛, Նաբո ջան, Գիգուլին խոմ փուղ չէ ուզում, — հարցրուց Նինուցին՝ ցավակցելով յուր ընկերուհուն:

— Գիգուլուն ո՞վ է մտիկ անում, — պատասխանեց նատոն տխրությամբ, — խոսքը հորն ու մորն է:

— Տղեն վուր ուզում է, քա ջան, հերն ու մերն ի՞նչ դավի ունին:

— Փուղի դավի ու նին, իմացա՞ր:

Երկու ընկերուհիների մեջ կրկին տիրեց լռությունը: Նրանցից ամեն մինը մտածում էր յուր վիճակի վրա: Երկուսն էլ պսակվելու աղջիկներ էին, երկուսն էլ փող չունեին: (Ցավալի՛ դրություն, երբ ամուսնական շղթան դարբնվում է արծաթի օղակներով...):

— Էն դարաբաղջի տղեն ի՛նչ է ուզում, — ընդհատեց Նինուցին լռությունը:

— Է՛հ, թաղեմ նրա գլուխն էլ... — պատասխանեց Նատոն առանձին զզվանքով:

— Ո՞վ է նա:

— Ի՞նչ գիտեմ: Կապ կտրածի մեկն, ո՞վ է:

— Ասում են, դեղիդ ուզում է քեզ էն տղին տա:

— Ուզում է:

— Իժում դուն ի՞նչ ես ասում:

— Ես ի՞նչ պիտիմ ասի...

— Կգնա՞ս, էլի՛ : Գիգուլուն պիտիս թողնի , էլի՛ :

— Մունջ կա՞ց, թե աստուծ կսիրես, Նինուցի, դարդերս մի թագացրու:

Նինուցին տեսնելով նատոյի աչքերի արտասուքը, լռեց: Մի քանի բոպե նրանք տխուր կերպով նայում էին միմյանց վրա:

— Լավ, աստված օղորմած է, մի լաց ըլի, — բռնեց Նատոյի ձեռքից Նինուցին. — դե՛, վիր կաց գնանք միր հարևան Սաբեդինց տունը, էնտեղ աղջիկները հավաքվիլ ին, պար ին գալիս:

— Է՛հ, ի՛նչ պար գալու սիրտ ունիմ... — ասաց Նատոն ետ քաշվելով:

— Աղջի, գժվի՞լ իս. էս կիրակի օրը վուչ շորերդ իս հագի, վուչ գլուխդ իս սանդրի. ով գիտե, երեսդ էլ չիս լվացի, — ծիծաղելով առաջ տարավ Նինուցին:

— Թո՛ղ տուր, թե աստված կսիրես:

Բայց նինուցին չէր դադարում նրան քարշ տալով դեպի Սաբեդինց տունը, երբ սենյակից լսելի եղավ Շուշանի ձայնն, որ կանչում էր նրան: Նատոն իսկույն թողեց յուր ընկերուհին և վազեց դեպի մայրը: «Խե՛ղճ նատո՛, ասաց Նինուցին և գնաց Սաբեդինց տունը պար գալու:

Ե

Նինուցին Նատոյի միակ ընկերուհին էր, որի հետ նրանք շատ անգամ մաալահաթներ էին անում, թափում էին իրանց սրտի դարդերը և մխիթարում էին մեկ՝ մեկու: Այդ երկու աղջիկներն ոչինչ գաղտնիք չունեին միմյանցից:

Նույն ավուր երեկոյան պահուն Նինուցին կանգնած էր իրանց տանիքի վրա, որ կից էր Շուշանենց կտուրին և նայում էր դեպի փողոցը: Նա անցավ Շուշանենց կտուրը, տեսավ Նատոյին իրանց թակումն, երբ ջրով սրսկում էր նա յուր ծաղիկները:

— Նատո, Նատո, — ձայն տվեց նա:

Նատոն վեր նայեց, տեսավ Նինուցին էր: — Ի՞նչ է, — հարցրուց օրիորդը:

— Դեղևդ տա՞նն է:

— Տանը չէ՛:

— Ապա ո՞վ կա ձիր տանը:

— Ոչ ով չկա:

— Էստի արի՛, բանիմ ասում:

— Ի՞նչ իս ասում, էնտղանցեն ասա՛, էլի :

— Էստղանց չիմ կանա ասի, դե վիր արի: Նատոն բարձրացավ յուր ընկերուհու մոտ:

Արեգակի վերջալույսը դեռ խաղում էր եկեղեցիների խաչազարդ գմբեթների հետ: Շրջակա տների կտուրները կանաչին էին տալիս նոր բուսած խոտով: Կտուրների վրա տեղ՝ տեղ արածում էին փոքրիկ ուլեր և այծեր, և նրանց մոտ մի քանի ընտանիք, դուրս գալով իրանց խեղդված

տնակներից նստած կանաչ խոտերի վրա, խամում էին երեկոյան թեյը և զվարճանում էին հիանալի տեսարանով:

Նատոն նայեց դեպի յուր չորս կողմը: — Տե՛ս, Նինուցի, ի՛նչ սիրուն կանաչիլ ին կտուրները, կոսես թե, մախմուռով ըլին ծածկված:

— Հա՛, Նատո, — պատասխանեց ընկերուհին խորին համակրորությամբ.— միր կտուրներին էլ միր սեյրանգահն է, ուրիշները ֆայտոնով Մուշտեիդ ին գնում, ու էնտեղ քեփ ին անում, մենք էլ միր կտուրների խոտերովն ինք ուրախանում:

— Մտիկ արա՛, Նինուցի, ձեռքով ցույց տվեց Նատոն, — հորեն դազախեցի Բարբարեն, միտին էլ իր աղջիկը չայ է շինում. էն էլ էրննեցու հարսն է՝ նրանց մոտը նստած չայի վրա մեծրած Կուլին. էն էլ խաշապան Սիակի կնիկը. Կատոն, էն էլ խաբարբզանն, ով գիտե ինչի ը կուլի խոտում...

— Է՛հ, նրա լեզուն էլ կտրվի՛, — ասաց Նինուցին յուր քոքլան դեպի Կատոն ուղղելով: — Ի՞նչու ես էլի եղպես տխուր, — դարձավ նա դեպի Նատոն, ուղիղ նրա երեսին նայելով:

Ես էլ չիմ գիտում... — պատասխանեց Նատոն ավելի տրտմությամբ:

— Կուզի՞ս ուրախացնիմ քիզ, — հարցրուց հինուցին ժպտելով:

— Ինչո՞վ:

Նինուցին մոտեցավ, նատոյի ականջին փսփսաց մի խոսք:

— Ղո՞ւրթ իս ասում, դո՞ւրթ իս ասում, չէ՛, խաբում կուլիս, Նինուցի, — անհամբերությամբ հարցրուց Նատոն, պինդ գրկելովյուր ընկերուհին:

Ժպիտ, ուրախություն, հրճվանք, այդ բոլորը կարելի էր նույն բույեին կարդալ Նատոյի գեղեցիկ դեմքի վրա...

— Դրո՞ւստ իս ասում, Նինուցի ջան, — կրկնեց Նատոն դարձյալ փաթաթվելով նրա վզին:

— Քու արևը գիտենա, վուր դրուստ իմ ասում, — պատասխանեց Նինուցին. դե՛, գնանք:

Երկու օրհորդները, ձեռք՝ ձեռքի տված, ուրախ՝ ուրախ իջան Նինուցենց տունը:

Նինուցին ներս տարավ Նատոյին մի սենյակ, ուր միայնակ նստած էր մի պատանի: Նա հագած ուներ մեխակի մահուդից կաբա, կապույտ գլասից արխալուդ, կապած ուներ արծաթի մինա արած քամար և վզին փաթաթել էր բաղդաղի աղլուխ: Պատանու սևորակ աչքերը, կամարած հոնքեր, մախմուռ թշերը, սև գանգրահեր մազերը՝ տալիս էին նրա դեմքին վայելչագեղ կերպարանք: Նա նստած էր սեղանի մոտ, որի վրա դրած էր գույնզգույն ծաղիկներից հյուսած գեղեցիկ փունջ:

— Էդ ի՞նչ սիրուն թայգուլ է, Գիգուլի ջան, — ասաց Նատոն, և ժպտելով մոտեցավ պատանուն. վեր առավ փունջը:

— Հավանում ե՞ս, Նատո ջան, — նույնպես ժպտելով հարցրուց պատանին:

— Շատ սիրուն է, — խոսեց Նատոն, և ձեռքը Գիգուլու ուսին դնելով, նազելի կերպով նայում էր նրա երեսին: — Էդ ու՞մ համար բերի:

Երիտասարդը կարմրեց: Իսկ ՆիՆուցին նրա փոխարեն պատասխանեց.

— Ո՛ւմ համա պիտի ըլի, քի համա բերած կուլի, էլի՛: Նատոն սկսեց ծիծաղել:

— Նատո, դո՞ւն լավ իս, թե է՞ս, — հարցրուց պատանին, ցույց տալով փունջը:

— Օրիորդն ոչինչ չպատասխանեց, և նրա թշերն յուր ձեռքի վարդերի գոյնը ստացան:

— Ի՞նչի ձեն չիս հանում, — հարցրուց Գիգուլին, բռնելով օրիորդի ձեռքից:

— Դուն իս լավը, դո՞ւն, — պատասխանեց Նատոն յուր ձեռքի ծաղիկներով հեզիկ շփելով պատանու երեսին:

— Չէ՛, դո՞ւն իս լավը, դո՞ւն իս սիրուն, Նատո ջան, — կրկնեց Գիգուլին և կամենում էր գրկել նրան, բայց օրիորդը ետ քաշվեցավ, երբ Նինուցին մեջ մտավ:

— Ի՞նչ իք կովում, — երկուսդ էլ լավն իք, — ասաց նա. — ամա վունց քու հերը, Գիգուլի, Նատոյին քեզ համա կուզե, վունց էլ Նատոյի մերը փուղ ունե, վուր նրան քիզ տա:

— Գժվի՞լ իս, Նինուցի՛, ինչի՞ր իս խոսում, — դարձավ պատանին դեպի Նինուցին շփոթվելով:

— Ես դրուստն իմ ասում, — ավելացրեց Նինուցին և պատմեց բոլորն, ինչ որ լսել էր դարաբաղի փեսացուի մասին:

— Ղո՞ւրթ ,է ասում, — դարձավ նա դեպի Նատոն:

— Հա՛, Գիգուլի, ինձ նրան ին տալի, — պատասխանեց Նատոն տխրությամբ:

— Ես կու մեռնիմ ու չեմ թողնի, վուր էդ բանը գլուխ գա, — խոսեց պատանին մի փոքր վրդովվելով:

Նրանք մնացին միայնակ:

Նատոն տխուր նստած էր Գիգուլու մոտ, երբ պատանին դարձավ դեպի նա. — Մի՛ դարդ անի, հոգի ջան, դու իմն իս, ե՛ս քոնն, ոչ ով չի կանա միզ մեկմեկուց բաժնել.: Այդ խոսքերին հաջորդեց մի ջերմ գրկախառնություն և երկուսի էլ երիտասարդական շրթունքները միախառնվեցան միմյանց հետ...:

Անցան մի քանի շաբաթներ, անցան մի քանի ամիսներ: Աշունքն էր: Տեղափոխիկ թռչունները խմբովին դիմում էին դես/ի օտար աշխարհ: Ծիծեռնակը բաժանվում էր յուր բույնից: Ծառերի դալկացած տերևները դեղնում էին: Նրանց հետևում և սիրուն Նատոյի վարդագույն թշերը գունատված, խամրած՝ օրըստօրե կորցնում էին իրանց քնքուշ կուսական թարմությունը:

Մութ գիշեր էր: Մառը քամին անախորժ կերպով փչում էր Շուշանենց տան կոտրատած ապակիներից, սենյակում բավականին ցուրտ էր: Միայնակ և տխուր նստած էր Նատոն ճրագի մոտ, կարում էր յուր կարը: Նրա մայրը խոհանոցում պատրաստում էր ընթրիք: Ուստա Գրիգորն յուր արհեստանոցում (որ բաղկանում էր ներքնատան մի նեղ սենյակից) գործում էր:

Նույն ժամուն խավար փողոցի միջով աննկատելի կերպով գնում էր մի մարդ: Նա հասավ Շուշանենց տանը և վագրի արագությամբ թռավ ցածրիկ տախտակապատից: Նա իսկույն կանգնեց սենյակի դռանն, երբ նրա ականջներին հասան այդ մելոդիական հնչումները՝

«Արի՛, իմ սիրեկան,

«Դարդիս ճար արա՛,

«Քո սիրո խանջարեմեն,

«Ջիգարս — փարա, փարա՛:

«Նա ինձ սիրում է՛, ասաց եկվորը և ավելի մոտեցավ դռանը: Հնչեց կախարդիչ երգի երկրորդ տունը:

«Ես քեզի չեմ մոռանա, «Քանի որ սաղ եմ,

«Քո սիրո զանջիրեմեն

«Մինչև մահ դու սաղ եմ՛:

«Նա ինձ սիրում է... — կրկնեց երիտասարդը և զմայլած ներս վազեց: — Նատո ջան, իմ սիրեկան, — կոչեց նա և օրիորդին պինդ ճնշեց յուր կուրծքի վրա:

Եկվորը Ջումշուդ՝ բեկն էր: Նա իսկույն սուսկաց, երբ յար աչքերը հանգիպեցան Նատոյի վշտալի, միննույն ժամանակ գայրացած աչքերին:

— Նատո ջան, — կրկնեց երիտասարդը, թողնելով նրան յուր գրկից» — դարդ մի՛ արա, հիմա դու բախտավոր ես: Ես հիմա հարուստ եմ, քեզ միշտ ոսկու, արծաթի, բրիլիանտի, ատլասի ու մախմուրի մեջ կպահեմ:

Օրիորդը գլուխը քարշ ձգեց, ոչինչ չպատասխանեց. նրա դեմքն ընդունեց ավելի տխուր արտահայտություն:

— Ինչու չես խոսում, Նատո ջան, մի ձեն հանի, քո հոգուն մատաղ, — շուտ՝ շուտ կրկնում էր երիտասարդը:

— Քո բրիլիանտներն ինձ պետք չէ՛ն... — ասաց օրիորդը և արտասուքը թրջեց նրա աչքերը:

Երիտասարդը վշտանալով թողեց նրան, երբ ներս մտավ Շուշանը: Նա դարձավ դեպի մայրն, ասելով:

— Դեղի ջան, ես հիմա բախտավոր եմ, էսօր փոշտից նամակ ստացա, հայրս վախճանվել է և ի՛նչքան ապրանք, մուլք, փող է թողել, գիտե՞ս — մին էս օթախով լիքը:

— Էդ լա՛վ խաբար է, — ուրախանալով կոչեց Շուշանը:

— Բա՛ս վատ խաբար է, — պատասխանեց երիտասարդը նույնպես ուրախությամբ: — Հայրս դարավու էր նստած յուր խազինի վրա, բայց հիմա նրա դռները բաց էլան ինձ համար:

— Փա՛ռք աստծու, փառք իրա մեծ գորութիւնին, — բացականչեց Շուշանը խորին ջերմեռանդությամբ:

— Հիմա Նատոյիս բախտն էլ բաց էլավ:

Շուշանը նստեց թախտի վրա: Ջումշուղ՝ բեկը տեղավորվեցավ նրա մոտ:

— Գիտե՞ս ինչ կա, դեղի ջան, ես պետք է շուտ գնամ, — շարունակեց երիտասարդը:

— Ո՞ւր, — զարհուրելով հարցրուց Շուշանը:

— Ղարաբաղ: Գնամ, որ հորս թողած կայքերին տիրությունանեմ:

Վերջին խոսքը ձգեց Շուշանին մտատանջության մեջ: — Վո՛ւյ, քոռանամ ես, — ասաց նա շվարած կերպով, — էդ վունց կուլի, մուր դուն գնաս առանց պսակվելու:

— Հիմա ի՞նչով կարող եմ պսակվել, որ էստեղ փող չունեմ:

Շուշանը խորին կասկածանաց մեջ ընկավ, գուցե յուր փեսացուն հայրենիքը գնալուց հետո կրկին չվերադառնա, այդ պատճառով մտածում էր վաղօրոք կապել նրա վիճակը յուր դստեր հետ:

— Վուրթի, — ասաց նա ծանր կերպով, — ինչ կլի է՞փ իմ Նատոյի աչքը պիտիս քու ճամփին պահի. Էդպես բան չի՛ ըլի, պսակվի, իժում աստված բարի ճանապարհ տա, ուր ուզում իս գնա:

— Հիմա ձեռքումս փող չունիմ, որ հարսանիք անեմ, ի՞նչպես պսակվեմ, — հարցրուց երիտասարդը:

— Ասում իս, վուր ձեռիդ փուղ չունի՞ս, բան չկա, ես մի քանի թուման պարտք կանեմ, կու մխսիմ ու քու լայաղ հարսանիք կոնիմ:

Զումշուդ՝ բեկի նպատակն էլ հենց այդ էր, թեև նա խորամանկությամբ պատճառում էր յուր գնալն, որպեսզի որքան կարելի է շտապեցնե հարսանիքը:

— Շատ լավ, դեղի չան, ես քո խոսքը չեմ կոտրի, ինչպես ասում ես, էնպես կանեմ, բայց դու էլ շտապիր, որ ինձ շատ չուշացնես այստեղ:

Շուշանն ուրախացավ, գրկեց յուր փեսացուն:

— Զումշուդ ջան, ես էգուցեվետ կու տեսնեմ հարսանիքիթադարեքը:

Նատոն, որ հեռու կանգնած լսում էր այգ խոսքերը, դուրս գնաց սենյակից խորին հուսահատությամբ: Նա նստեց բակի խավարումն յուր սովորական տախտակի վրա, երկար լաց էր լինում և ա ի ն ու վախ քաշում, երբ ճրագը ձեռին յուր արհեստանոցից դուրս եկավ նրա հայրը: Նա իմացավ յուր դստեր դարդը, բռնեց նրա ձեռքից: — Գնանք, Նատո ջան, էստեղ մի՛ նստի, ցուրտ է, կմրսես, — ասաց նա, ներս տանելով նրան սենյակը:

Է

Անցավ մի ամբողջ շաբաթ Զումշուդ՝ բեկի հոր մահվան լուրը հայտնվելուց:

Մի գիշեր Շուշանի քրոջ՝ Սոփոյի տունը սովորականից փառավոր կերպարանք էր ստացել: Մենյակները լուսավորված էին ճրագներով: Եռ էր գալիս բազմությունը գույնզգույն հագուստներով: Ամեն տեղ ուրախությամբ փայլում էին երեսները: Լսելի էին փնում երգի, գուռնայի և նաղարայի ձայներ:

Նատոյի հարսանիքն էր: Շուշանի տունը փոքր լինելու համար, այստեղ էր կատարվում հանդեսը: Այս և այն անկյուններում, և այս և այն սենյակներում հավաքված հյուրերի մեջ, անց էին կենում զվարճալի խոսակցություններ: Մի տեղ տերտերը, հավաքած յուր շուրջը մի քանի արհեստավորներ, զարմացնում էր նրանց յուր խորին գիտությամբը, խոսելով սրբերից և հրաշքներից: Մի տեղ կանայքը բաց էին արել բամբասանքի բազարը: Մի այլ սենյակում աղջիկները շրջապատած Նատոյին դայիրա էին ածում, երգում էին և պար էին գալիս: Իսկ Շուշանն ոտքի վրա անդադար պոփոս էր գալիս, զանազան կարգադրություններ էր անում և յուր հյուրերի հետ քաղցրախոսում էր ու նրանց սիրտն էր շահում:

— Մաբետ, — ասում էր Թաթուխենց Նատայան յուր մոտ նստած կնոջ ականջին, — տեհնում ե՞ս Շուշանի բախտն, վո՞ւնց առանց փուղի ու առանց բաժինքի տանու փեսա ճարեց իր համար:

— Էդ էլ աստծու տուրք է, Նատայա ջան, — պատասխանեց ճոն՝ Օհանեսի կինը՝ Մաբետոն:

— Հալբաթտա, առանց աստծու կամքի փոթոլը ծառից վեր չէ գալիս, մագրամ, ադմորթին պիտի բախտ էլ ունենա:

— Չէ՛, էդ դարիբականները փուղին շատ մտիկ չին անում, — մեջ մտավ կալատող Միմոնի կինը՝ Մաշոն. — նրանք աղջկան ին մտիկ անում, աղջիկն օդոնդ լավն ըլի, էդ է հարկավոր նրանց:

— Մագրամ, էդ դարաբաղցին ի՞նչ մի հուտով ծաղիկ ջոկեց իր համա... — նրանց խոսքը կտրեց խարազ Դարչոյի կինը՝ Բարբարեն:

— Չէ, Բարբարեն, էդ ո՛ւր իս ասում, միդք է էդենց խոսիլը. Նատոն, հա՛խ աստծու, հալալ կաթնակեր ու սիրուն աղջիկ է, — պատասխանեց Դարբաղենց Մակին:

— Լավ հալալ կաթնակեր ես գտի... նրա բաներն ես լավ գիտեմ մանդրուք ծախող Գիգուլու հետ...
— խոսեց Բարբարեն երեսը շուռ տալով:

— Է՛հ, էդ ինչի՞ր եք խոսում, — մեջ մտավ դագագ Ծղալոբի կինը՝ Սալումեն. — մեր ժուկում ո՞վ է մտիկ տալիս, վուր աղջիկը լավ կաթնակեր ու հալալ ըլի. էս ժուկում աղջկա սիրունությունն էլ վուչինչ է, նրա խիլքն էլ վուչինչ է, նրա ուսումն էլ վուչինչ է... հենց աղջիկը շատ փուղ ունենա, — փեսեն նրա համար հազիր է, թեկուզ նա քոռ ըլի, թեկուզ քաչալ ըլի, աննամուս ըլի — դիփ մեկ է...: Թե չէ էդենց քոռ քոռինա մուշտարիքը հագրեմեն մե գամ ռաստ չին գալիս, վուր առանց փուղ ու բաժինքի նշնվին:

Սալումեի խոսքերը գրավեցին կանանց ընդհանուր համակրությունը և ամենքը միաբերան ձայն տվին, — անիծվի՛ էդ թավուր աղաթը... նրա մոգոնողի տունը քանդվի ...

Բայց տղամարդերի մեջ անց էր կենում բոլորովին այլ խոսակցություն, բոլորովին կենսական այլ խնդիրների վրա: Նրանք խոսում էին նույն օրերի հացի և այլ ուտելիքի թանկության մասին:

— Էդ բոլորը ժողովրդի մեղքերիցն է, — ասաց նրանց քահանան. — երբ մարդերի մեղքը բազմանում է, աստված էլ խրատում է նրանց տեսակ՝ տեսակ պատիժներով: Գիտե՞ք, ո՛րքան թերահավատացել է մեր ժողովուրդն, էլ ոչ ժամն են իմանում և ոչ աղոթքը, էլ ոչ պասն են իմանում և ոչ պատարագը. էլ ոչ սուրբն են իմանում, ոչ սրբությունը, դիփ մի խոսքով մոռացել են, հենց սատանայի ճամփան բռնած գնում են:

Քահանայի խոսքերը շարժեցին մի քանիսի ջերմեռանդությունն, որոնք իրենց երեսները խաչակնքելով ասում էին. — Միդա աստծու, միդա իր սուրբ գորությունին:

— Բայց երբ որ մարդիկը չար ճամփեմեն դառնան, — հառաչ տարավ քահանան. — Քրիստոսի ճամփովը գնան, այսինքն կամենում եմ ասել՝ մատաղ մորթեն, սուրբերը համբուրելու գնան, աղքատներին ողորմություն անեն, տերտերի հախը չկտրեն, աստված էլ քաղցր աչքով մտիկ կունե նրանց, հացը գինին ու ամեն բան կբուլացնե: — Թե քոլ Քրիստոսը կու սիրես, տերտեր ջան, էս քարուզնիքը թող մնան, — քահանայի խոսքը կտրեց մի կարմիր և ուռած թշերով տղամարդ՝ շիրաջի Կոնին. — աղբաթը խեր, հարսանիքի տուն է, խոմ եկեղեցի չէ, ինչ Ավետարանի վուխտ իս գթի, թող մե քիչ գինի խմենք, քեփ անենք, սրտերս բաց ըլի:

— Բի՛բերանդ պաչ անեմ, Կոնի ջան, — նրան գրկելով ասաց ձկնապան Մեխակը. — ախբեր, ի՞նչ միք խեղքի բան է խուրը գրքերեմեն խոսիլը. միրն էն է ուտենք խմենք, քեփ անենք ու աստծուն փառք տանք:

— Բարաքալդի, բարաքալդի, Միխակ ջան, քո հոգուն մեռնիմ, — գոռացին մի քանի ձայներ: —
Հախ աստծու, լավ օրինավոր խոսք ասեցիր:

— Քու կենացը, քու կենացը, — ձայն տվեցին զանազան կողմից, նրանցից ամեն մինը չիկացնելով
Մեխակի հետ իրանց բաժակները:

Սույն միջոցին կույր աշղը, Բեժանը, քաշեց ճիռնուրի աղեղն երգելով Սայաթ-Նովայից.

«Աշխարքումս դարդ չիմ անի

«Քանի վուր սաղ իս ինձ համա»... 2

— Ա՛խ, թե գիտենայի էս գինին ո՞վ է մոգոնի, — ասաց խմողներից մինը հիացմամբ նայելով յուր
կարմիր բաժակին.— Ես ամեն տարի նրան մատաղ կու կտրեի:

— Գանա էս էլ չի՞ս գիտի, ուստա Պետրոս, — նրա խոսքը կտրեց քահանան:

— Ես վուր դանցեն գիտենամ, քու հոգուն մատաղ, տերտեր ջան, — պատասխանեց ուստա
Պետրոսը: — Գրի սիվն ու սպիտակը դուք եք իմանում, աստծու խոսքերը ձիր մոտն ին, մենք ի՞նչ
ինք սորվի, վուր ինչ գիտենանք:

— Գինին Նոյ նահապետն է շինի, — ասաց տերտերը մի առանձին նշանակություն տալով յուր
գիտությանը և ավելացնելով մի քանի խոսք Քամի մասին:

Բոլորը զարմանալով լսում էին:

— Փառք Նոյի սուրբ գորութենին, — ասաց ուստա Պետրոսը հրեսը խաչակնքելով:

— Նոյի հոգուն մեռնե՛մ, — բացականչեց մի աշխույժ երիասարդ բարձրացնելով յուր բաժակը.—
էս էլ Նոյի կենացը, թե նա չէր էլի մենք էդ պլպլուն թասերը վո՞ւր տեղից պիտի խմեինք:

Բոլորը ձայն տվեցին նրան և մի՛մի բաժակ խմեցին Նոյի կենացը, կարծելով, թե նա դեռ կենդանի
է:

Այգ ընդհանուր ուրախության մեջ տերտերը նկատեց, որ միակ տխուր մարդն ուստա Գրիգորն
էր՝ նորահարսի հայրը: Նա անդադար դուրս էր գալիս, ներս էր մտնում, կարծես, մի բան նրան
անհանգստացնում էր:

— Ի՞նչ էս նոթերդ կիտել, ուստա Գրիգոր, — դարձավ դեպի նա տերտերը. — օրհնած, էս
ուրախությունը քոնն է, դու ի՞նչու ետդարդ անում:

Ուստա Գրիգորը գլուխը միայն շարժեց ցույց տալով, որ ինքը զբաղված է, և հեռացավ առանց
պատասխանելու:

Գիշերվա կեսն էր: Հասանների խոպոտ ձայնը, մուլաշրջիկ շների աննպատակ հեծկլտոցը, տարածամ տարփածուի կառքի դղրդոցը երբեմն ընդհատում էին փողոցների խուլ գերեզմանական լռությունը: Բազարի խանութներից մինի մեջ միայն փայլում էր աղոտ լույսը, ուր նստած էր մի պատանի:

Աղա, բշխրմա՞ ես քըշեր էտենց զարթուն ես մնալի, չես քնելի, — ասաց պատանուն խոյեցի հասասը, գլուխը ներս տանելով խանութի դռնից:

— Քունս չէ տանում, Կարո, — պատասխանեց պատանին: Պատանին մեր Նատոյի սիրականը՝ Գիգուլին էր: Լսելով լա ռաբաղցի փեսացուի պատմությունը և օրիորդի ծնողաց նպատակը՝ Գիգուլին չկարողացավ յուր համբերությունը զսպել, տեսնելով, որ յուր սիրուհին շուտով կորած կլիներ յուր համար: Նա, որքան և պատկառանք էր դնում յուր հոր և մոր պատվին, որքան և ամաչկոտ էր յուր որդիական հնազանդության մեջ, այսուամենայնիվ համարձակվեցավ յուր ծնողաց առջև պարզ խոստովանվել յուր սերը դեպի Շուշանի աղջիկը: Նա ո՛չ միայն գտավ ծնողաց կողմից ամենասաստիկ ընդդիմադրություն, այլև նրանք սպառնացին, եթե պատանին բոլորովին չէր փոխելու յուր միտքը, կարող էր իսպառ զրկվիլ հայրական ժառանգությունից: Դրա հետեվանքն այն եղավ, որ Գիգուլին թողեց հոր տունը, և այնուհետև զիշերում էր յուր խանութի մեջ: Համալը, տեսնելով նրա տխրությունը, նստեց խանութի դռան շեմքի վրա և սկսավ պատանուն զբաղեցնել յուր զրույցներով:

— Դյուն մե դարդ ունես, որ քյունդ չի տանելի, — հարցրուց Հասասը:

— Ունեմ, Կարո, դարդ ունեմ.. պատասխանեց Գիգուլին խորհրդական ձայնով և պատմեց մասնավորապես Նատոյի մասին:

— Է՛հ, աղա, ես էլ որ քո պես հալա ջահիլ էմեր, քշերները քյունս չէր տանելի, — ասաց Հասասը յուր հին ցավերը միտ բերելով. — մեր գեղը մե ախչիկ կար, էնդդար խորոտիկ էր, որ կասես մարալ-ջեյրան էր. էն րնձիկ էր սիրելի, ես դրան էմեր սիրելի, էրկուսիս էլ սրտերը կապած էներ մեկզմեկու: Էլավ որ, մեր գեղի մալիքի լաճու աշկը ընկավ էն ախչկան, սիրեց դարբ. էլ էն ախչիկը րնձի չըտըվին. և փսայվեց մալիքի լաճու հետը: Մե ամիս չքաշեց ախչիկը դարդըմախ էլավ...: Ես էլ դարդեմեն ետ էն երկրեն տուս էգամ, որ էլ չտսնամ դար գերեզմանը...

Խոյեցի հասասն այդ խոսքերն այնպիսի մի ցավալի կերպով պատմեց, որ ինքը նույնպես չկարողացավ զսպել յուր արտասուքը և վերջին տողերն արտասանելու միջոցին նրա ձայնը բոլորովին խեղդվեցավ:

Գիգուլին ցավելով նայում էր նրա վրա, տեսնելով, որ սերն ունի յուր բոցավառ զորությունը մինչև անգամ այնպիսի պարզամիտ և անմեղ արարածների մեջ, որպիսի էր խոյեցի հասասը: Եվ նա դարձավ դեպի Կարոն այդպիսի խոսքերով.

— Էդպես է, Կարո՛: Բայց ավելի լավ է, որ մարդ ինքը մեռնի ու չտեսնի յուր սիրած աղջկան մեկ ուրիշը տանելիս... դու էլի բախտավոր ես, Կարո, որ տեսար քո սիրածի գերեզմանը...

Կարոն տեսավ, որ յուր խոսակիցն ավելի տխրության մեջ ընկավ, ասաց նրան.

— Աղա, ձեր թաղը էս քշեր խարնիս կա, աղեկն էնի, որ դու քանդ փակեա, էթաս էնտեղ, որ սիրտդ բացվի:

— Հարսնի՞ ք... — կրկնեց Գիգուլին մի զարհուրելի սարսուռ զգալով յուր ամբողջ մարմնի մեջ:

— Խրամանքս, խարնիս, էս ձեր թաղեն էս քշեր ընցամ, գուռնա՛ նաղարայի ձեն էր իգալի Շուշանի քրոջ Սոփոյի տնեն:

Գիգուլին բոլորովին շփոթվեցավ և խնդրեց հասափն օգնել իրան խանութը կոզպելու:

Կէս ժամից հետո նա հասավ պառավ Սոփոյի տանը: Նվագածուրջանց ձայները մի նոր սարսափ ձգեցին նրա վրա: Պատանին քարացած, կանգնած լսում էր հարսանիքի տնից եկող ձայները, և նրա վրդովմունքը գնալով սաստկանում էր: Հանկարծ երևաց մի օրիորդ, որ փոքրիկ լապտերը ձեռին վազում էր դեպի մոտավոր տունը:

— Ա՛խ, Նինուցի, դո՞ւն էս, — կոչեց պատանին նրան տեսնելով:

— Ես իմ, Գիգուլի ջան, — ձայն տվեց օրիորդը և կանգնեց:

— Ուր էս գնում:

— Միր տուն, մանտոս վիկալնեմ, խիստ ցուրտ է, հիմա պսակ պիտի գնանք:

— Ի՞նչ պսակ, — շփոթվելով հարցրուց պատանին:

— Չի՞ ս գիտի, Նատոյի պսակն է էս գիշեր:

Պատանին բոլորովին թուլացավ:

Նատոն հիմի էլ է սիրում քիզ, Գի գուլի ջան, — ասաց Նինուցին. — քանի գամ սիրտը գնաց, թիլացավ, էս նրան ուշքի բերի...: Նա ասում էր ինձ. նինուցի, էս կմեռնիմ, ինչկլի ինձ եկեղեցի տանին:

— Ա՛խ, աստվա՛ծ... — կոչեց պատանին խորին հուսահատության մեջ:

— Նատոն միդ չունի, Գիգուլի ջան, — առաջ տարավ օրիորդը. — նա ասում էր, որ քիզ չի մոռանա, ինչկլի մահը կսիրե քիզ...: Բայց քոռանա՛ քու հորն ու մոր աչքերը, վուր ձիզ մեկմեկուց բաժանեցին...:

Պատանին էլ ոչինչ չխոսեց, նա յուր դողդոջուն քայլերն ուղղեց դեպի Քուռի կողմն, երբ Նինուցին հեռացավ նրանից: Այդ լռությունը խիստ զգալի եղավ օրիորդին, որին հայտնի էր Գիգուլու հուսահատ դրությունը: Այդ պատճառով Նինուցին հեռվից նայում էր, տեսնել, թե ո՞ր կողմը գնաց պատանին: Օրիորդն էլ չսպասեց գնալ իրանց տունը, վեր առնել յուր մանտոն, այլ կրկին մտավ հարսանիքի տունը և հագիվ լսելի ձայնով շնջաց եղբոր ականջին:

— Ստեփկո, մեր Գիգոլին էս նմուտին Սաղի կուռը գնաց, ես խիստ դարդոտ տեսա նրան. գնա՛, տես ինչ էլավ խեղճ տղին:

Լսելով այդ խոսքերը Նինուցայի եղբայրն, իսկույն դուրս վազեց: «Խե՛ղճ Գիգոլի, ինչու է գնում նա Սաղի կուռը», ասում էր Ստեփկոն ինքն իրան:

Երկնքի սև ամպերը սկսել էին արդեն նոսրանալ և Քուռի ամպերը լուսավորում էին լուսնի գունաթափ շողքերով: Քանի ըոպեից հետո Գիգոլին հասավ գետի եզերքը: «Էլ էստումեն դենը ինձ պետք չէ ապրել», — ասաց նա և պատրաստվում էր իրան ջուրը ձգել, երբ Ստեփկոյի երկայթի մատները բռնեցին նրան:

— Ա՛խ, Ստեփկո, թե ախբեր իս թող տուր, — աղաչում էր պատանին:

— Ի՞նչ իս շինում, գժվի՞լ իս, — պատասխանեց Ստեփկոն, հեռացնելով նրան գետի ափից:

— Ա՛խ, ի՞նչի դուն վրա հասա՛ր...

Թ

Սույն միջոցին պառավ Սոփոյի տան քահանան ոտքի ելավ, կոչնականներից ամեն միևր վառեցին իրանց լապտերները և պատրաստվում էին եկեղեցի գնալ պսակի խորհուրդը կատարելու:

Ջումշուդ-բեկը զարդարված էր յուր հարսանիքի հագուստով, որոնք նույն օրերում Շուշանը նրա համար կարել էր տված: Երիտասարդն յուր սրտի ամենասքանչելի հրճվանքի մեջն էր: Իսկ Նատոն, թեև նույնպես զարդարված, բայց նրա գունաթափ դեմքը, վշտահար աչքերը ցուցանում էին հուսահատության ամենասարսափելի հուզմունքն, որ նույն ըոպեին խռովում էր օրիորդի սիրտը:

Հանկարծ ներս մտավ մի անծանոթ հյուր: Դա էր սպիտակ մորուքով հսկայատիպ մի ծերունի: Նրա սև շալե չուխան, ահագին մոթալ փափախը, կաշյա տրեխները ցույց էին տալիս, որ նա գալիս էր հեռու երկրից: Ծերունու օտարոտի երևույթը, խոժոռ կերպարանքը յուր վրա դարձրեց բոլոր հանդիսականաց ուշադրությունը:

Իսկ այդ անակնկալ հայտնությունը կայծակի հարվածք ունեցավ փեսայի վրա, որի դեմքն իսկույն կա վիճի պես գունաթափվեցավ,

Ծերունին, ամեննին ուշադրություն չդարձնելով յար շրջապատողների վրա, անփույթ կերպով մոտեցավ փեսային, և յուր լի բարկությամբ սպանիչ հայացքը ձգելով նրա երեսին, ասաց.

— Ադա՛, քնձահոր լակոտ, ըսքան տարի թո՞ ո՞նըս կորալ, քանի վախտ ա տու եղնադ մանըմ գոլիս, էլ ոչ Ռուսեթ, էլ ոչ Ղզրաշի երկիրը, օլքա չըմ թողալ լոխ մանըմ էկալ՝ բալքում քե քթնամ. ամա դու քո տոնըդ տեղդ, քուլփաթըդ մննադ քըցալըս, դիարբադիար (երկրե երկիր) քո քեփը արամիշըս անըմ: Ադա՛ թուլա տղա, բա՛ իսկի փիքը չը՞ս անըմ, թա ես էլ հար օնեմ, մար օնեմ, տոն օնեմ, տեղ օնեմ...: Բա՛, իսկի՞ մետըդ չըս քըցում, որ քո խոխեքը տյուզընը ծարավ կոտորվում են, քո նշանածի աչքերա լացնելու քոռացալա ...

Սարսափը և զարհուրանքը տիրեց Ջումշուդ-բեկին: Նա սառած նայում էր ծերունու երեսին առանց կարողանալու մի բառ անգամ պատասխանել:

Հանդիսականքն ոչինչ չհասկացան այդ խոսքերից: Միայն Շուշանը, տեսնելով, որ ծերունին ձեռքը ձգեց և կամենում էր բռնությամբ դեպի դուրս քաշել յուր փեսացուն, վազեց և բռնելով նրա թկից, ճչաց.

— Բիձա՛, բիձա՛, ո՞վ ես, ի՞նչ ես անում, ի՞նչ դավի ունիսդրա հետ:

Ծերունին յուր վայրենի դեմքը շրջեց դեպի Շուշանը, պատասխանեց մի փոքր մեղմացնելով յուր գյուղական կոշտությունը. — Ես հու՞ եմ... հըրցնումըս դու, ես էդ անաբուռ տղի խեղճ հարնըմ (ցույց տվեց նա Ջումշուդ բեկի վրա), էդ իմ բեղասրլ տըղաս ա՛ ...

— Ես չեմ ճանաչում քեզ, — պատասխանեց Ջումշուդ՝ բեկը:

— Չըս ճանչընը՛մ... յաշը՛մըս էդ մըհակը... — ձայն տվեց ծերունին, բարձրացնելով ահագին մահական, որ բռնած ուներ ձեռին:

Շուշանն այսքանը հասկացավ, որ ծերունին հայտնեց, թե նա փեսայի հայրն էր. — Ի՞նչ հեր. — ճչաց նա մեջ մտնելով. — սա հեր չունի, սրա հերը մեռել է:

Գյուղացու վայրենի դեմքը ցնցվեցավ մի թթու ծիծաղելով և նա պատասխանեց հեզնորեն, ուղիղ Շուշանի երեսին նայելով.

Հա՛, դրա հարը մռալ ա... ամմա էլլըհա մըռըլ տեղա իրակացալ...:

— Դուն սրա հերը չի՛ս, սա Մելիք Թորոսի վուրթի Ջումշուդ-բեկն է, սրա հերը մինձ մարթ էր, քի պես արջ չէր, — պատասխա- նեց Շուշանն ավելի կրքով:

Իսկ գյուղացին խիստ արհամարհական սառնությամբ ասաց նրան.

— Մելիք Թորոսին տղան ա՛, հա՞ ... Ջիմշուդ՝ բեկն ա՛, հա՞ ...:

— Դրուստ ա՛, Մելիք մորոսին տղան շատ մեծ մարթ ա, ամմա էդ յալանչին (ցույց է տալիս փեսայի վրա) նրան տղան չէ, դա ինձ նման շնեցի առչին ճոտը — Գյուքի ն ա, Գյուքի ն...

— Գյուքին ո՞վ է, ի՞նչ իս խոսում, դա հիմի իմ փեսեն է:

Վերջին խոսքը զգալի կերպով սարսափ ձգեց ծերունու վրա և նա դարձավ դեպի Շուշանը, հարցնելով.

— Քու փեսադ ա, հա՞:

— Հա՛, իմ փեսեն է, էս գիշեր պիտի պսակենք, տեհնում ե՞ս վուր հարսանիք է, — պատասխանեց Շուշանը, ցույց տալով հանդիսականները:

Ծերունին բոլորովին թուլացավ: Նա դարձավ դեպի որդին այդպիսի անեծքներով.

— Տափը մըննես դու, ըստուծու կեծակը տա քեզ... ըստեղելը՞ս խափալ... ըստեղելը՞ս օգուս փսակվես...

Հետո նա դարձավ դեպի Շուշանն որդու վրա ցույց տալով. — Նանի, Հախմիանտերը ընեծի՛ դրան, չորք տարի ա ես օլքից օլքա դրա ետնան շոռըմ գալիս, էլ տեղ չմնացալ, որ դա չփսակվի... Էլ տեղ չմնացալ, որ ուրան կնեկը բըրախ տված չընի... ամեն շհարում դրան խոխեքը, դրան կնեկները ուզողըթյուն ըն անրմ...

— Պսակվե՞լ գարհուրելով հարցրուց Շուշանը:

— Հա՛, նանի՛, օխտը հետ փսակվալա էդ պտըհասու էկածը... չըհա մըհեկս տանը կնեկ օնի:

Բոլոր հանդիսականքն, որոնք մինչև այն րոպեն զարմացած նայում էին այդ դրամային, քարի պես սառեցան:

— Վա՛ յ իմ միղքը... կոչեց Շուշանը գլխին տալով:

— Վա՛ յ իմ նամուսին... կոչեց Նատոն ուշքից գնալով:

— Թողե՛ք ես էդ անիծվածին սպանեմ... — կոչեց ուստա Գրիգորը, ուրազը ձեռին առյուծի պես ներս վազելով:

Իսկ «տ ն ա յ ի ն փ ե ս ա ն» արդեն ուրվականի պես աներևութացել էր...

Սույն միջոցին մի պատանի մոտեցավ ուշագնաց Նատոին. — Ե՛ս իմ քու փեսան, է՛ս... — կոչեց նա վեր բարձրացնելով նրան հատակի վրայից:

Դա Գրիգորին էր:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սալբի

«Սալբին» հեղինակի վաղ շրջանի ա մեն ա ծավալուն ստեղծագործությունն է: Այս վեպի առաջին գրաբար վարիանտը Րաֆֆին գրել է 1855 թվականին, այն ժամանակ, երբ սովորում էր Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: Վեպի առաջաբանում Րաֆֆին նշում էր, որ «Թիֆլիսում աշակերտության ժամանակից (1855 թվականում) սկսած էինք պատրաստել մի վիպասանական գործք»: Թեև ուղղակի տվյալներ չկան, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ վեպի գրությունն ավարտվել է մեկ տարում: Րաֆֆին նույն առաջաբանում խոսելով 1858 թվականի դեպքերի շուրջը, «Սալբու» գրության մասին հիշում է որպես արդեն վաղուց կատարված փաստ: «Սալբին» արդեն գրված էր, — ասում է նա, — երբ 1858 թվականին հրատարակվում է «Հյուսիսափայլը»: Բացի այդ, Րաֆֆու այրին՝ Աննա Րաֆֆին, «Սալբու» 1911 թվականի հրատարակության

առաջաբանում նշելով հայերեն տպագրված վեպերի սակավությունը և այդ առթիվ խոսելով Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մասին, գրում է. «Վերք Հայաստանին» գրված է ավելի վաղ, բայց տպագրվեցավ միայն 1859 թ. (պետք է լինի 1858 թ. — Խ. Ա.) երեք տարի «Մալբի» գրվելուց հետո: Հայտնի է նաև Աննա Բաֆֆին մի այլ տեղեկություն, ուր ուղղակի ասված է. «Այդ պատմական վիպասանությունը («Մալբին» — Խ. Ա.) նա գրել է 1855 թվականներում»: (Տե՛ս Թեոդիկ «Ամենուն տարեցույցը», 1912 թ. էջ 22:) Ինչպես տեսնում ենք, կան որոշակի հիմքեր պնդելու, որ Բաֆֆին վեպի գրությունը վերջացրել է մեկ տարվա ընթացքում:

Վեպի նախնական տարբերակը եղել է գրաբար, սակայն հետագայում, երբ հրատարակվում է «Հյուսիսսփայլը», Բաֆֆին զգում է իր սխալը և «Մալբին» վեր է ածում աշխարհաբարի:

Համակրելով «Հյուսիսսփայլի» ուղղությունը և տարվելով նրա մեծ աշ — խաասակից Մ. Նալբանդյանի գաղափարներով, Բաֆֆին լեզվից բացի հետագայում 1865, 1867 և 1868 թվականներին վերանայում է վեպի նաև բովանդակությունն ու կառուցվածքը: Վեպը, ինչպես նաև նրա առաջաբանը մի քանի անգամ զանազան առիթներով վերամշակվել են Բաֆֆու կողմից: Տարբեր ժամանակներում կատարած մշակումները իրենց կնիքը թողել են վեպի և առաջաբանի վրա, որը և առիթ է տալիս որոշ տարակարծությունների: Թվում է, թե վեպի և առաջաբանի գրության և ավարտման տարեթվերը նույնն են, իսկ ոմանք առաջաբանի գրության տարեթիվը նույնացնելով Բաֆֆու կողմից «Մալբի» վեպը Մ. Նալբանդյանի հիշատակին նվիրելու ընծայականի տարեթվի հետ՝ առաջաբանը համարում են 1867 թվականի գրություն:

«Մալբի» վեպին կից «Հառաջաբանի» սույն տեքստը ամբողջովին չէր կարող 1855 թվականին գրված լինել, որովհետև այնտեղ արծարծված մի շարք հարցեր վերաբերում են ավելի ուշ ժամանակաշրջանի (1858 թ.): Առաջաբանն ամբողջությամբ վերցված չէր կարող նաև 1862 — 63 թվականներից առաջ գրված լինել առավելապես այն պատճառով, որ Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, որի որոշ մտքերը Բաֆֆու կողմից օգտագործված են վեպի առաջաբանում, հրատարակվել է 1862 թ. Փարիզում: (Հայտնի է, որ այդ գիրքը արգելված էր ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում:) Հետևապես, եթե հաշվի առնենք այդ աշխատության գաղտնի տե՛ղափոխման ու տարածման դժվարությունները և դրա հետ կապված ժամանակի կորուստը, ապա այս ամենը թույլ են տալիս ենթադրելու, որ գիրքը 1863 թվականից շուտ չէր կարող Բաֆֆու ձեռքն անցած լինել, ուստի և նա չէր կարող առաջաբանը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, առաջաբանի մի շարք կարևոր հատկանիշները 1863 թվականից շուտ գրած լինել:

Ինչ վերաբերում է այն տեսակետին, թե «վեպի առաջաբանը գրված է եղել 1867 թ.», ապա այդ ևս ճիշտ չէ: Բաֆֆին նույն առաջաբանում գրում է, որ ինքը հավելորդ չհամարեց տասն տարի առաջ պատրաստած յուր հայրենակիցների կյանքի նկարագրությունքը մամուլին հանձնել»: Եթե ընդունենք, որ Բաֆֆին վեպը գրել է մեկ տարվա ընթացքում, 1855 թ., և դրա վրա ավելացնենք հեղինակի հիշատակած «տասն տարին», ապա կարելի է պնդել, որ նա «Հառաջաբանը» գրել է 1865 թվականից ոչ ուշ:

Սրանով չի բացառվում այն հանգամանքը, որ առաջաբանի առանձին հատվածները կարող էին ավելի վաղ, ինչպես 1855 և 1858 թվականներին, այնպես էլ ավելի ուշ՝ 1865 և 1867 թվականներին գրված լինել:

Համեմատաբար ամենից ստույգը Մ. Նալբանդյանի հիշատակին նվիրված անծայականի գրության տարբերիվն ու ժամանակն է: Նալբանդյանի մահվանից մեկ տարի ինն ամիս հետո Բաֆֆին Սալմաստից ուղարկված մի նամակում խոսք է բացում Նալբանդյանի սգավոր մահվան մասին: Ամենայն հավանականությամբ հենց այս օրերին էլ, այսինքն՝ 1867 թվականին, դեկտեմբեր ամսին, նա իր «Սալբի» վեպը մի ընծայականով նվիրում է Մ. Նալբանդյանի «միշտ օրինյալ հիշատակին»:

Վեպի նախնական, գրաբար տարբերակը կոչվել է «Սալբի», այնուհետև 1858 թվականի վերամշակումից հետո հիշատակվում է նաև «Խլվիկի» ապա հետագայում՝ նորից «Սալբի», երբեմն էլ նույն գործի համար երկու անունն էլ, էգտագործվել է առանց որոշակի տարբերության, իսկ մամուլում և նամակներում կան տեղեկություններ, որ Բաֆֆու «Խլվիկին» ու «Սալբին» երկու առանձին վեպեր են: Ավթանդիլյանը խոսելով Բաֆֆու գրական ժառանգության մասին, գրում է. «Բաֆֆու հեղինակությունից այդ միջոցին գրեթե պատրաստ էին բազմահատոր «Փունջերը», «Խաչագողի հիշատակարանը», «Կայծերը», «Սալբին» և «Խլվիկը»: Վերջին երկուսը մնում են մինչև օրս անտիպ»:

Այստեղից ակներև է դառնում, որ այդ «երկուսը» երբեմն համարվել են առանձին վեպեր, թեև ճիշտն այն է, որ «Սալբին» հանդիսանում է «Խլվիկի» ընդարձակ թերևս նաև, հասարակական նոր խնդիրներով լրացված շարադրությունը: Այս տեսակետը հիմնավորելու համար՝ հենվել ենք նաև «Արձագանքում» տպագրված մի տեղեկության վրա, ուր բառացիորեն ասված է, որ Բաֆֆին «...նույն վեպի («Խլվիկի» — Խ.Ս) բովանդակությունը, գրեթե ամբողջ գործողությունը և նույնիսկ գործող անձանց դուրս է բերել «Սալբի» անունով իր մի մեծահատոր ձեռագիր վեպի մեջ» (տե՛ս «Արձագանք» 1889 թ., № 28, էջ 426):

Այսպիսով, հիմքում ունենալով «Խլվիկի» վեպը և տարվելով նոր գաղափարներով, Բաֆֆին ձեռնարկում է եղածը ամփոփել «Սալբու» մեջ «զանազան հերոսների և տիպերի կենդանի պատկերներով»:

Անհավանական չէ, որ վեպի հատկապես այն գլուխները, ուր խոսվում է սոցիալական խնդիրների շուրջը և շոշափված են քաղաքական հարցեր, ավելացված ձև հետագա յում :

Տվյալներ կան, որ Բաֆֆին վերամշակել է ոչ միայն «Սալբին», այլ նաև «Խլվիկի» տարբերակը և այն էլ մի քանի անգամ: Խաչատուր Տեր-Չաքարյանին գրած Աննա Բաֆֆիի նամակից պարզվում է, որ Բաֆֆու «Վերոհիշյալ վիպա-սանությունը («Խլվիկը») սրբագրված է մի թավրիզեցի հայ ուսուցչի ձեռքով 1867 թվականին հանգուցյալի վաճառականության ժամանակ» (տե՛ս Հայկ, ՄՍՌ-Գիտ. Ակ. Գրակ. և արվեստի թանգարան, Բաֆֆու արխիվ, N 40): Նույն այդ ինքնագիր ձեռագրի մասին «Նոր Դարի» 1889 թվականի 113-րդ համարում տպագրված է թավրիզաբնակ Ս. Սաֆրազի նամակը, ուր մի քանի տողով նկարագրված է ձեռագիրը: Այնուհետև թղթակիցը ավելացնում է, որ գրքի առաջին երեսում հանգուցյալի ձեռքով գրված է՝ «Խլվիկի» ազգային վիպասանություն պարսկահայոց կյանքից առնված: Աշխատությունն Հակոբ Մելիք — Հակոբյանց, հատոր առաջին ի 1867 ամի 1 հունվար Սալմաստ նահանգում Փայաջուկ գյուղ»: Բացի այն, որ 1867 թվականին Բաֆֆին վեպը կոչել է «Խլվիկի» անունով, Արծրունու մի հոդվածից հայտնի է դառնում, որ նույնիսկ 1872 թվականին «Մշակում» տպագրելու համար Բաֆֆին վեպը ներկայացրել է ոչ թե «Սալբի», այլ «Խլվիկի» խորագրով: «Մշակի» 1873 թվականի մայիսի 10—ի հայտարարությունից իմանում ենք, որ «Խլվիկը» նույնպես բաղկացած է երեք հատորից: Այս ամենից ծնունդ է առնում

այն, որ թեև 1865 թվականին «Մալբի» տարբերակը արդեն պատրաստ էր տպագրության, բայց և այնպես հեղինակը 1872 թվականին իր վեպը կոչել է նաև «Խլվիկ» անունով և երկրորդ, որ նա աշխատել է վեպի մեկ տարբերակի վրա երկու անվան տակ, որից և սկիզբ է առել «Երկու առանձին վեպերի» գոյության թյուրիմացությունը: «Մալբու» և «Խլվիկի» առանձին վեպեր լինելու մասին ուրիշ հավաստի փաստեր չկան, վեպի երկու տարբերակների առկայությունը ամենից առաջ պայմանավորված է այն բանով, որ գոյություն ունեցող փաստաթղթերում հիշատակվում են և՛ «Մալբի», և՛ թե «Խլվիկ» անունները, քանի որ նման անվանումը չի բխել այդ ձեռագրերի միջև տարբերություն ստեղծելու անհրաժեշտությունից, և փաստաթղթերում այդ անունները հեղինակի և այլոց կողմից օգտագործված են ոչ հետևողականորեն, ապա «Մալբին» և «Խլվիկը» ճիշտնայն վեպի կամ տարբերակներն են և կամ միևնույն վեպի տարբեր անունները: Այս բանը հաստատող փաստերից մեկն էլ այն է, որ Աննա Բաֆֆոն ձեռքում եղած «Մալբու» ձեռագիրը արտագրված է հեղինակի ինքնագիր մի բնագրից, որը կրել է «Խլվիկ» անունը և որը հեղինակը 1867 թ. սովել է թավրիզեցի ուսուցիչ Միքա Կարապետին արտագրելու (տե՛ս «Մշակ», 1890 թ., N 62),

«Մալբին» տպագրելու առաջին փորձերը հեղինակը ձեռնարկում է գրելուց ութ տարի հետո, 1863 թվականին: Մեզ հայտնի չէ, թե մինչև այդ Բաֆֆին երբևէ ցանկացել է արդյոք վեպը տպագրության հանձնել, թե ոչ, բայց որ նա 1858 թվականին մշակելով այն «Խլվիկ» վերնագրով, 1863 թվականին ուղարկել է Մտ. Նազարյանին՝ «Հյուսիսսփայլում» տպագրելու համար, դա փաստ է: «1863 թվականին այդ վիպասանությունը, — գրում է Աննա Բաֆֆին, — ուղարկվում է Մոսկվա Մտ. Նազարյանի «Հյուսիսսփայլի» ամսատետրակներում մաս-մաս տպագրվելու համար, սակայն դեռ այդ վեպի տպագրությունը չսկսած, դադարեցվում է հիշյալ ամսաթերթը զանազան փոթորիկների շնորհիվ» (խոսքը «Հյուսիսսփայլի» 1863 թվականին ժամանակավորապես դադարելու մասին է):

Վեպի «Խլվիկ» տարբերակը «Հյուսիսսփայլում» չտպագրվելը Բաֆֆուն չի վիստեցնում, նա Թիֆլիսում եղած ժամանակ (1868 թվականին) այն նորից է մշակում ու կարդում գրական երեկույթներում, որը և մեծ ընդունելություն է գտնում: Շատ Հավանական է, որ վեպի «Ռուստամի օրագրություններից և Մալբիի նամակները» ամբողջ հատվածը գրվել է, և կամ ձեռագրի այդ մասը վերամշակվել է հենց այդ օրերին, որովհետև «Վեպիկներ և պատկերներ» գրքի երկրորդ հատորում, ուր առաջին անգամ տպագրվել է վեպի սույն հատվածը, ցանկում վերնագրի դիմաց որպես գրության տարեթիվ դրված է 1868 թիվը: Ավագ Ավթանգիլյանին ուղղված նույն թվականի օգոստոսի 24-ը թվակիր նամակից իմանում ենք, որ «Խլվիկը» զարմանալի ընդունելություն է գտել «տեղի (Թիֆլիսի) ընթերցող հասարակությունեն, քանի՛-քանի՛ գիշերներ եղած են առանձին առանձին ժողովներ նրա ընթերցանության համար»: Գործի համբավը հասնելով Նազարյանին, նա նամակով խնդրում է Բաֆֆուն վեպը ուղարկել իրեն: «Նազարյանից նամակներ եմ ստանում, — նույն տեղում գրում է Բաֆֆին, — նա պահանջել էր իմ գիրքը Մոսկվա ուղարկելու, որ տպվի «Լապտեր Հայաստանի» օրագրի մեջ, որ միտք ունի այս տարի ի լույս ընծայել»: (Բաֆֆի, «Երկերի ժողովածու», տասներորդ հատոր, Երևան, 1959 թ., էջ 525:) Բաֆֆին վեպը ուղարկում է Նազարյանին թե՛ ոչ, հայտնի չէ, սակայն մի բան պարզ է, որ օրագիրը չի հրատարակվել ուստի և «Խլվիկը» այս անգամ ևս չէր կարող տպագրվել:

1872 թվականին Գ. Արծրունին Բաֆֆուն հրավիրում է աշխատակցել նոր Հիմնադրված «Մշակ» շաբաթաթերթին: Բաֆֆին նույն թվականին Արծրունուն է ներկայացնում «Խլվիկ» վեպը

«Մշակում» մաս առ մաս տպագրելու համար, որը, սակայն, ծավալի մեծության պատճառով չի տպագրվում:

Արծրունին մերժելով վեպը ամբողջովին տպագրել «Մշակ»-ում, Բաֆֆու մոտ միտք է հղանում «Փունջի» (բանաստեղծությունների) տպագրությունից հետո հրատարակել նաև «Խլվիկ» վեպը: «Մշակ»-ի 1873 թ. մայիսի 10-ի համարում կարդում ենք, որ «Եթե հայկական գրականություն սիրողները իրենց նյութական օգնությամբ, կնպաստեն մեզ, «Փունջի» տպագրությանը, այնուհետև խմբագրությունս նպատակ ունի ի լույս ածել Բաֆֆիի և մյուս բանաստեղծությունքը, որպիսին են «Խլվիկ» վիպասանությունը երեք հատորով, Պարսկաստանի կյանքից առնված...»: 1874 թվականին «Փունջի» առաջին հատորի ընթերցողներին ուղղված ներածականում Բաֆֆին հրատարակում է այդ հատորների «պարունակությունը»: Ըստ այդ ծրագրի «Փունջի» վեցերորդ, յոթերորդ և ութերորդ հատորներում պետք է հերթականությամբ տպագրվեն «Սալբու» առաջին, երկրորդ և երրորդ հատորները «Վերջի» հետ միասին (բացի երեք հատորից, «Սալբին», ունեցել է նաև «Վերջ»):

Բաֆֆին, հրատարակության պատրաստելով վեպի առաջին հատորը, սպասում է դրա հաջող ընդունելությանը, որից հետո ավելացնում է նա վեպի առա — ջաբանում, «կարելի էր ի լույս ընծայել նրա երկրորդ և երրորդ հատորները, որոնք արդեն պատրաստ են»: Սրանից բացի, «Փունջի» տասը հատորյակի ծրագրում Բաֆֆին մատնանշում է, որ «մնացած ինը հատորների պարունակությունը բոլորը պատրաստ են, վերջացած չէ միայն Ներսես Ե-րդի կենսագրությունը»: Այսպիսով, ընդգծված բառերից պարզ նկատվում է, որ ինչպես 1865 թվականին գրված առաջաբանում, այնպես էլ 1874 թվականին կազմած ծրագրում հեղինակը հայտնում է, որ «Սալբու» հատորները գրված, պատրաստ են տպագրության: Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, Բաֆֆին «Սալբու» վրա իր կատարելիք աշխատանքները ավարտված չի համարել նույնիսկ 80-ական թվականներին: Շիրվանզադեի մի վկայությունից մենք իմանում ենք, որ նա «Կայծերի» երկրորդ հատորի տպագրությունից ազատվելուց հետո նպատակ է ունեցել «վերջացնել «Դավիթ Բեկը», «Հարեմը», «Սամվելը», հետո «Սալբին» ուղղել (ընդգծումը մերն է — Խ. Ս.) և վերջապես տպագրության տալ» (տե՛ս, Շիրվանզադե, «Երկերի ժողովածու», Երևան, 1961 թ., հատ. 8, էջ 480):

Այս ամենից հետո հարկ է նշել, որ «Սալբու» ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ու երրորդ հատորները հեղինակի կենդանության օրոք չեն տպագրվել: Բաֆֆու համառ ջանքերը՝ վեպը տպագրելու ուղղությամբ, անցել են ապարդյուն, թեև Բաֆֆու տղան՝ Արամ Բաֆֆին այն միտքն է հայտնում, որ «ճանապարհորդություն Պարսկաստանի» ակնարկաշարը (տպագրված «Մշակում» 1872 — 73 թթ. տե՛ս երկերի ժողովածու», հատոր 8, էջ 310) «Բառցի վերցված է «Սալբից» (տե՛ս Տարագ, 1908 թ., № 5, էջ 35): Եթե հավաստի համարենք այս վկայությունը, ապա այդ նշանակում է, որ «Սալբին» ինչ-որ ձևով (փոխված վերնագրով) հրատարակվել է հեղինակի կենդանության օրոք: Այս տեսակետը հաստատող ուրիշ փաստեր ոչ միայն չկան, այլև եղածները բերում են միմյանց հակադիր եզրակացություն: Նախ «ճանապարհորդություն Պարսկաստանի» հոդվածաշարը չունի պուժետային գծի այն զարգացումը, որը առկա է «Սալբու» առաջին հատորում և հետո Բաֆֆու կնոջ՝ Աննա Բաֆֆու հայտնած տեղեկությունները միանգամայն այլ բան են ասում: Ըստ նրա «Սալբին» չի հրատարակվել ոչ միայն հեղինակի նյութական միջոցների սղության պատճառով, այլ նաև քաղաքական նկատառումներով: «Բաֆֆու արծարծած գաղափարները, — գրում է Աննա Բաֆֆին վեպի առաջին հրատարակության առաջաբանում, — գրգռում են մահմեդական հոգևորականությանը նրա դեմ, և քանի որ «Սալբի վեպում

մերկացվում է այդ հոգևորականության գոեհիկ կյանքը», մանավանդ, որ հեղինակն էլ պարսկահայատակ էր և ճանաչված անձնավորություն, պարզ է, որ նա չէր կարող հրապարակ հանել մի այնպիսի վեպ, ուր ամբողջովին մերկացվում է Պարսկաստանի հասարակական-քաղաքական կյանքը. «Ուստի և, — ավելացնում է Աննա Բաֆֆին, — վեպը անտիպ է՝ մնացել մինչև հեղինակի մահը» (ընդգծումը մերն է — Խ. Ս.): Մոր և որդու կարծիքներից մեզ ավելի հավանական ու հավաստի է թվում Աննա Բաֆֆու հայտնածը: Այնուամենայնիվ, այս հարցի վերջնական լուծումը կապված է «Սալբու» Բ և Գ հատորների ձեռագրերի հայտնաբերման հետ:

Բաֆֆու մահվանից հետո այս վեպից մի հատված «Ծառայող Դևիկը վերնագրով, առաջին անգամ հրատարակվել է 1891 թվականին, «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում: Վերջում գրված է. ««Խլվիկ» ձեռագրից, գլուխ Ա»: Համեմատությունը ցույց տվեց, որ «Խլվիկի» սույն հատվածը «Սալբի» վեպի առաջին գլուխն է երկու նախադասության չնչին տարբերությամբ: Բացի դրանից, հրատարակիչը «Սալբու» առաջին գլխի՝ «Ծառայող դևիկը» վերնագրի սկզբում ավելացրել է Խլվիկի բառը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, հեղինակի կողմից «Լապտեր Հայաստանի»-ում տպագրելու համար պատրաստած տեքստի առաջին հատորը կրել է «Խլվիկ» անունը:

Մի երկրորդ հատված «Ռուստամի օրագրություններից և Սալբիի նամակները» ընդհանուր վերնագրով տպագրվել է 1893 թվականին «Վեպիկներ և պատկերներ» գրքի երկրորդ հատորում: Հատվածի վերջում, տողատակին գրված է «Սալբի» ձեռագրից գլուխ ԻԶ, ԻԷ, ԻԸ և ԻԹ»: Վերջին ԻԹ գլուխը տպագրված է ոչ թե ամբողջովին, այլ միայն սկզբի մասը: Բացի դրանից, տպագրված է նաև մի հատված էՍ գլխի վերջին մասից, որի մասին տողատակում չի հիշատակված:

Երրորդ հատվածը «Սալբի անտիպ գրվածքից մի գլուխ» վերնագրով տպագրվել է «Հնչակ» ամսաթերթի 1897 թվականի 9-րդ համարում (էջ 71): Ստուգումը ցույց տվեց, որ «Հնչակում» տպված հատվածը «Սալբու» առաջին հատորից չէ: Մնում է ենթադրել, որ այն տպագրված է «Սալբու» երկրորդ կամ երրորդ հատորից: Այդ հատվածը նույնությամբ տեղադրում ենք այստեղ:

«Ս Ա Լ ԲԻ»

Անտիպ գրվածքից մի գլուխ

...Վարագույրը բարձրանում է, թատրոնական բեմը ձևացնում է մի սքանչելի տեսարան, որ պատկերացնում է ծերունի Հայաստանը յուր տխուր և տրտում կերպարանքով: Հեռուն, հսկայի նման կանգնած է Արարատ սաբը, նրա չորեքկողմում տեսանելի են քանդված քաղաքների և գեղորայից ավերակներ, որոնց վրա տիրում է հավիտենական խավարի թագավորությունը: «Շինության ոգին» միայնակ թռչում է այդ մահահրավեր տարածության վրա: Երկար թռչելուց հետո նա նստում է ավեր Հայաստանի փլատակների վրա. նա սկսում է մտածել... նա մտածում է նրա մյուս անգամ շինության մասին:

Հատակագիծը ծրագրվում է, նյութը պատրաստվում է. ոգին կամենում է ձգել հիմքը: Երևան են լինում չորս մանկահասակ հերոսներ, նրանցից ամեն մինը բերում է մի ահագին քար, դնում է լինելիք շինության հատակագծի մոտ, ասելով. «Ահա շինության անկյունաքարերը, դրա վրա պիտի դրվի հիմքը»:

Այդ քարերն ունեն զանազան գույն և զանազան ձևեր: Նոցանցից մինի վրա գրված էր այս խոսքերը. — «Ավետարան, կամ Կրոնական կյանք»: Մյուսի վրա. «Դպրոցներ, կամ իմացական կյանք»: Երրորդի վրա. — «Հող, կամ Նյութական կյանք»: Չորրորդի վրա. — «Թագ և Գավազան, կամ Քաղաքական կյանք»: Ոգին կամենում է ձգել հիմքը: Հերոսներից ամեն մինը յուր քարը առաջ է մղում, պահանջելով, թե նա պիտի լինի գլխավոր անկյունաքարը: Բարձրանում է վեճ և աղմուկ: Նոքա սկսում են միմյանց դեմ հակաճառել: Շինության գործը մնում է անշարժ:

Մինչև դոքա այդ խռովության մեջ էին, երևան են լինում հերոսների մի նոր խումբ սև հագուստներով, երկայն մոբարներով և կատաղած ու փրփրած բերաններով: Նոքա գլորելով բերում են մի ահագին անտաշ քար, հավիտենական հնությունից սևացած և բորբոսնած, որի անհարթ մակերեփույթի վրա հազիվ կարդացվում էր բառս, — «Խավար, կամ Մեռելային կյանք»:

«Կորե՛ք, լակոտներ, գոռացին նոքա դեպի առաջին չորս մանկահասակ հերոսները, հավիտենից այդ ավերակների հիմքը գրված է եղել այս սրբազան քարերի վրա, դարձյալ սրա վրա պիտի հաստատվի նորոգ շինությունը»:

Մանկահասակ հերոսները ընդդիմանում են նրանց: Կոխ և խռովությունը սաստկանում է: Շնության ոգին հուսահատությամբ աներևութանում է:

Նույն խռովության և աղաղակի ձայնը հասնում է երկինք, դիք իջնում են ցած. Արարատյան գագաթի վրա ատյան են կազմում:

Երկայն մորուքավոր ծերերի բողոքը հասնում է մինչև տարտարոս, անդունդը բաց է լինում, հանկարծ երևան է լինում յուր ստորերկրյա խմբերով, մահու և խավարի թագավորը, — սարսափելի Պլուտոնը:

Ծերունիք ուրախությամբ դիմում են յուր յանց պաշտպանի առաջ և տարածվում են նրա ոտքերի տակ և գետինն են համբուրում:

«Կորե՛ք, անիրավներ, գոռում է խալէարի թագավորը դեպի մանկահասակ հերոսները: Դուք լիրբ լակոտներ, մարտնչում եք իմ իշխանության դեմ: Ես ինքս իմ ձեռքով դուրս հանելով տարտարոսի կամարներից երկու քար, ձգեցի, աշխարհ, մինը անցավ Արաբիայում, որի վրա դրված է այժմ Մեքիայի Սրբազանի հիմքը և մյուսը Հայաստան, որի վրա առաջ դրված էր և այժմ նույնպես պիտի դրվի նրա շինության հիմքը»:

Մինչ Պլուտոնը բարկացած կամեր յուր երեքարկանի հարվածով գլորել չորս հերոսները դեպի անդունդը, հանկարծ Հերմեսը վրա է հասնում: Նա ամոքում է Մահու Արքայի բարկությունը և հրավիրում է նրան Արարատ, ուր դիք խորհուրդ ունեին և նրան սպասում էին:

Մի քանի բոպեից հետո հայտնվում են Ապոլոնը և Աթենասը: Նոքա կարգում են դից վճիռը, որով սև զդեստավոր ծերունիքը դատապարտվում են դեպի հավիտենական կորուստը, իսկ չորս մանկահասակ հերոսներին ասում են. — «Դուք չորեքյանքդ միմյանց եղբայր եք, ձեր չորս քարերը պիտի դրվեն չորս անկյուններում և նոցա վրա պիտի բարձրանա շինությունը»:

Երևան է լինում դարձյալ շինության ոգին: Եվ վարագույրը ցած է իջնում: Թատրոնի մեջ հնչվում են ծափահարություններ և «Կեցցե՛ հաղթությունը» — «Կեցցե՛ նոր սերունդը»:

Նույն այս հատվածը Զոնգոտ Քրիստոֆի թարգմանությամբ 1900 թվականին հրատարակվել է նաև հունգարերեն, Սզամոսույվա քաղաքում լույս տեսնող «ARMENIA» ամսագրում (N 3, էջ 73), ինչպես նաև տեղ է գտել Թեոդիկի «Ամենայն տարեցույցը» պարբերագրի 1912 թվահամարում:

Վերջապես, հեղինակի մահվանից 22 տարի հետո, նրա այրին՝ Աննան, որոշում է «Սալբի» վեպի իր մոտ եղած ձեռագրի առաջին հատորը հանձնել տպագրության, որը լույս է տեսնում 1911 թվականին Վիեննայում: «Սալբու» առաջին հատորը երկրորդ անգամ վերահրատարակվել է 1949 թվականին Երևանում, Բաֆ-ֆու երկերի եռհատորյակի առաջին հատորում: Վեպի երրորդ հրատարակությունը տեղի է ունենում 1955 թվականին, Բաֆֆու երկերի տասնհատորյակի առաջին հատորում: Չունենալով Բաֆֆու արխիվը և «Սալբի» վեպի հեղինակի ինքնագիր տեքստը, հրատարակության համար նախապատրաստելիս հիմք է ընդունվել Աննա Բաֆֆու կողմից խմբագրված գիրքը, որը, մի շարք թերություններով հանդերձ, հանդիսանում է եղած միակ վստահելի բնագիրը: Գրքի առաջաբանում հրատարակիչը հայտնում է, որ Բաֆֆին փոխել է առաջաբանի լեզուն, անփոփոխ թողնելով տեքստը, ապա ավելացնում է, որ ինքն էլ հենվելով առաջաբանի վրա, մշակել է վեպի լեզուն: «Մենք էլ միայն «Հառաջաբանը» այնպես պահեցինք, ինչպես որ գրված է եղել ձեռագիրը. այստեղ կտեսնվի վեպի նախնական լեզուն, իսկ վեպի ամբողջ ընթացքում՝ հեղինակի «ունենք», «բարեխոսությունքը», «նորան», «գտանելով», «պիտո է» և այլ հնաձևությունները պատշաճ համարեցինք ուղղել «ունեինք», «բարեխոսությունները», «նրան», «պետք է»»: Այս փոփոխություններից բացի «Սալբու» տեքստը որոշ չափով տուժել է նաև արտագրության ժամանակ: Բաֆֆին ցանկանալով վեպը հրատարակել՝ առաջին հատորը տալիս է իր գրագրին «օրինակելու»: Այնուհետև Բաֆֆին արտագրածը նախապատրաստում է տպագրության, վերջում դնելով մի ծանոթագրություն (տե՛ս այս գրքում, էջ 391): Ծանոթագրությունից հայտնի է դառնում, որ այս վեպում տեքստաբանական ենթադրվող անճշտությունների մի մասի պատճառը գրագիրն է, որը «մեր լեզվի կանոններին եղել է անտեղյակ» և երկրորդ, որ հրատարակիչ Աննա Բաֆֆիի ձեռքի տակ եղել է ոչ թե հեղինակի ինքնագիր ձեռագիրը, ինչպես այդ բանը աշխատում է հավատացնել «Արձագանքի» խմբագրությունը (տե՛ս «Արձագանք», 1889 թ., N 28, էջ 426), այլ առաջին հատորի արտագրված օրինակը: Զրկված լինելով հեղինակի ինքնագիր ձեռագրից և ձեռքի տակ չունենալով «Սալբու» այլ, ավելի ճշտված հրատարակություն, կազմողները խստությամբ պահպանել են 1911 թ. հրատարակության տեքստը՝ փոխելով միայն ուղղագրությունը: Տեքստում օրիորդ և տիկին բառերը մերթ րնդ մերթ օգտագործված են և՛ լրիվ, և կրճատ ձևով, միակերպության համար նպատակահարմար դիտվեց բոլոր դեպքերում պահպանել այդ բառերի գրության լրիվ ձևը:

Բացի սրանից, հեղինակը ռոման բառի փոխարեն երբեմն գործ է ածում նաև ռոմանս բառը, որը, ըստ էության, չի արտահայտում նույն բովանդակությունը, ուստի և այնտեղ, ուր ռոմանս բառը օգտագործվում է վեպի իմաստով, դարձված է ռոման:

ՀԱՐԵՍ

1873 — 74 թվականներին Բաֆֆին ծրագրում է իր ստեղծագործություններն — ամփոփել տասը հատորյակի մեջ «Փունջ» ընդհանուր խորագրով: Ըստ այդ ծրագրի, երկրորդ գրքում պետք է տեղադրվեր «Հարեմի» առաջին մասը, իսկ երրորդ գրքում՝ «երկրորդ մասը և վերջը»:

թվականին հրատարակված «Փունջի» երկրորդ գրքում մի քանի այլ ստեղծագործությունների հետ տպագրված է նաև «Հարեմ» վիպակի առաջին մասը: Հրատարակելով իր երկերը, ինչպես բացատրում է հեղինակը, նա նպատակ է ունեցել դրանցով «...նախ զարգացնել կարդացողների ճաշակը և նոցա սերը դեպի մայրենի լեզվի ընթերցանությունը, մինչև նոքա պատրաստ կլինեն հետաքրքրվիլ ավելի ընդարձակ վիպասանական գրվածքներով» (Փունջ, երկրորդ հատոր, էջ VIII):

Ռ. Պատկանյանը, կարդալով Րաֆֆու «Հարեմը», 1874 թվականի սեպտեմբերի 5-ին Նոր Նախիջևանից նրան գրում է. «...Ձեր արձակը յուր սեռում ամեն կողմանե նոր երևույթ է մեր նորածին գրականության մեջ»: Գնահատման հարցում Պատկանյանին ամենից առաջ գրավում է «արտաքին և ներքին հյուսվածքը» ու շոշափած խնդիրների արդիականությունը: Պատկանյանը կարդալով «Հարեմը», Րաֆֆուն համարում է այն մարգարե գրողը, որին իրենք «ցարդ պտրում էին ու չէին գտնում»:

«Հարեմի» հրապարակ գալը լայն արձագանք է հանդես բերում նաև մամուլում: «Մեղու Հայաստանին», որ անբարյացակամ էր տրամադրված դեպի «Մշակն» ու Րաֆֆին, չկարողացավ թաքցնել իր հիացմունքը այս վիպակի հրատարակման առթիվ. «Կարդացեք հարեմական կյանքի նկարագրությունը, — հիաց-մամբ գրում է հոդվածագիր Հայկունին, — որքան բանականություն և գեղեցկություն... ինձ ծանոթ նկարագրություններից, — ավելացնում է նա, — միայն լորդ Բայրոնն է այդ, որ նույնչափ հաջող է նկարագրել հարեմը (տե՛ս, «Մեղու Հայաստանի», 1881 թ., N 183):

Պոլսահայ թերթերը, որոնք առհասարակ զգուշությամբ էին խոսում Րաֆֆու մասին, նրանք ևս տպում են մի քանի հոդվածներ Րաֆֆու ստեղծագործությունների վերաբերյալ: Այդ թերթերից մեկում կարդում ենք, որ «Փունջում» տպագրված ստեղծագործություններից «...նշանավոր է «Հարեմը», որը իր տեսապի մեջ առաջին կարգի գրված մե»: «Հարեմի» համբավը հասնում է արևմուտք: Գերմանացի մատենագիր Արթուր Լայստը մի նամակով դիմում է «Մշակի» խմբագրությանը խնդրելով միջնորդել, որ Րաֆֆին իրեն ուղարկի «Հարեմ» և «Ջալալեդդին» վեպիկները գերմանական ժողովրդին ծանոթացնելու համար (տե՛ս «Մշակ», 1884 թ., N 39, էջ 2),

Բավականին խճճված ու մասամբ էլ անորոշ է «Հարեմի» գրության թվականը: Աննա Րաֆֆին 1913 թվականին իր հրատարակած «Պարսկական պատկերներ» ժողովածուի ցանկում, որպես գրության տարեթիվ, ոչ ճիշտ կերպով «Հարեմի» առաջին մասի համար մատնանշում է 1873 և երկրորդ մասի համար 1874 թվականները: Այս սխալը կրկնվել է նաև հետագայում, ինչպես և տեղ է գտել Րաֆֆու երկերի 1949 թվականի հրատարակության մեջ: Բարեբախտաբար պահպանվել է մի վկայություն, որը հնարավորություն է տալիս ճշտելու դրության մոտավոր թվականը: «Փունջի» առաջին հատորի առաջաբանում Րաֆֆին հայտնում է այսպիսի մի տեղեկություն «... «Հարեմը»,

«Սառան» և «Ղուլտուբանին», — գրում է նա, — մեր Պարսկաստանում եղած գրվածներիցն է, երբ արդեն վերադարձած էինք մեր հայրենիքը»: Րաֆֆին այս փաստը Հայտնում կ 1874 թվականին: Հայտնի է, որ նա Պարսկաստանում եղել է 1856 — 1868, ինչպես նաև 1869 թվականներին: Ընդգծված բառերից երևում է, որ Րաֆֆին «Հարեմը» գրել է վերադարձի ժամանակ: Առաջին վերադարձին (1856 թվականին) պարզ է, որ նա չէր կարող նման վեպ գրել («Հարեմը հեղինակի ավելի հասուն շրջանի ստեղ — ծագործության արդյունք է), ուստի պետք է հենվել մյուս տարեթվի վրա և հետևյալն, որ վիպակը գրվել կ 1869 թվականին: Րաֆֆին 1873 թ. «Փունջի» տասը հատոր

յակների հրատարակության ծրագրում գրում է, որ բոլոր հատորների «պարունակությունը» արդեն պատրաստ է (այդ թվում նաև «Հարեմի» առաջին, երկրորդ մասերը և վերջը): Հեղինակի հայտնած տեղեկության ճշտությունը նույն նախագծում մատնանշված մյուս ստեղծագործությունների գոյության փաստով արդեն հաստատված է: Բացի դրանից, 1874 թվականին «Մշակում Բաֆֆին հայտարարություն է տպում այն մասին, որ ցանկանում է Հրատարակել «Փունջիի երրորդ հատորը (որի մեջ պետք է լիներ նաև «Հարեմի» երկրորդ մասը և վերջը)» Դժվար է ասել, որ Բաֆֆին կարող էր դեռևս չգրված գործի մասին այդպիսի Հայ — տարարություն անել: Ուստի և մենք հիմք չունենք չասելու, որ վեպի երկրորդ մասը դրվել է 1874 թվականից ավելի վաղ, մոտավորապես առաջին մասը գրվելուց անմիջապես հետո:

«Հարեմը» Բաֆֆու տպագրված առաջին ամենաձավալուն ստեղծագործությունն է, որը կարճ ժամանակում մեծ տարածում է ստանում: Լոյս տեսնելուց մի քանի տարի անց, այս ստեղծագործությունը իսկույն թարգմանվում է ռուսերեն և մի շարք այլ լեզուներով: «Մշակի» 1879 թվականի 121-րդ համարում կարդում ենք, որ Բաֆֆու սույն վիպակը «В Персидском Гареме.» վերնադրով տպագրվել է Մոսկվայի (Русские Ведомости» թերթի 151 — 162-րդ համարներում (1879 թ.) Ա. Դադյանցի թարգմանությամբ: Այս վիպակի հրատարակ գալը համ բավի ու փառքի հետ միասին ծանր փորձությունների առաջ կանգնեցնում հեղինակին: Տպագրվելուց երկու տարի հետո, 1876 թվականին, Բաֆֆու հակառակորդները նրան ամբաստանելու համար, «Հարեմը» թարգմանում են պարսկերեն և ներկայացնում պարսից թագաժառանգին: Այս մատնության հետևանքով՝ գրգռվում է մահմեդական հոգևորականության մոլեռանդությունը, և սպառնալիք կ ստեղծվում Բաֆֆու կյանքի հանդեպ:

1887 թվականին Լայպցիգում գերմաներեն հրատարակվում է «Հայկական մատենադարան» (Armenisches Bibliothek), մատենաշարի Գ հատորը: Այս գրքում Բաֆֆու այլ ստեղծագործությունների հետ տպագրվում է նաև «Հարեմ» վիպակը Լեո Ռուբենյու (Աբգար Հովհաննիսյանի) թարգմանությամբ: «Հարեմը», հեղինակի մահվանից հետո երկրորդ ոչ-լրիվ մասի հետ միասին, տպագրվում է 1891 թվականին «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում: «Հարեմը» երրորդ անգամ տպագրվել կ «Պարսկական պատկերներ» ժողովածուի մեջ: Այնուհետև «В Персидском Гареме.» վերնագրով 1892 թվականին այս վիպակը Ե. Նեկրասովայի թարգմանությամբ տպագրվում կ «Волжский вестник»-/» 143, 145, 149, 150 և 151-րդ համարներում: Ապա մեկ տարի անց, 1893 թվականին, նույնի թարգմանությամբ (միայն առաջին մասը) «Гарем.» վերնագրով տպագրվում է Յուրի Վեսելովսկու և Մ. Բերբերյան ի խմբագրած «Армянские беллетристы» ժողովածուի առաջին հատորում: 1913 թվականին Նյու-Յորքում հրատարակվող «Armenia» ամսագրի 11-րդ համարում Ջ. Բոյաջյանի թարգմանությամբ անգլերեն տպագրվում է «Հարեմ» վիպակից մի չափածո հատված (երկու քառատող) (The Parrots song», (Թութակի երգը) վերնագրով: Նույն թվականին, նույնպես անգլերեն, Ջաբել Բոյաջյանի թարգմանությամբ «Ararat» ամսագրում տպագրվում է Միրզա-Շաֆու երգը «Ballad-» վերնադրով (14 քառատող):

Մեր օրերում «Հարեմը» առաջին անգամ տպագրվել է Բաֆֆու երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում, այնուհետև լույս է տեսել երկերի տասնհատորյակի առաջին հատորում (Երևան, 1955 թ.):

1897 թվականին թատերական գործիչ Ադամ Սարդարյան-Արևշատյանը Բաֆֆու այս վիպակը վեր է ածում դրամայի, որը և մի շարք անգամ խաղացվում է ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ սիրողական խմբերի կողմից:

Դրամայի տեքստը, որը կրում կ «Զուբեյիդա կամ Հարեմ» խորագիրը, 140 էջից բաղկացած մի տետր է, որը ձեռագիր վիճակում պահվում է Հայկ. ՄՍՌ Գիտ. Ակ. գրակ, և արվեստի թանգարանի դրամատուրգիայի ֆոնդում 245-րդ համարի տակ:

1899 թ. Թիֆլիսում տեղի դերասանական ուժերը կազմելով մի ընկերություն, դերասանուհիներ Ֆելեկյան քույրերի մասնակցությամբ, նույն թվականի դեկտեմբերի 30-ին բեմադրում են այս դրաման: Մի քանի տարի անց, 1903 թ., «Զուբեյիդան» («Հարեմը») նորից է բեմադրվում Հավլաբարի Արաքսյանի թատրոնում: «Այդ դրաման շինված էր Բաֆֆու երկու վեպերից՝ Դավիթ բեկից և Հարեմից, բավական հաջող և փորձառու կերպով» կարդում ենք նույն ներկայացման առթիվ դրված թատերական ռեցենզիայում: (Տե՛ս «Տարագ», 1903 թ., N38, էջ 336):

«Հարեմի տեքստը տպագրության պատրաստելու ընթացքում կազմողները առաջին մասի համար հիմք են ընդունել «Փունջի» երկրորդ հատորում հեղինակի կենդանության օրով հրատարակված տեքստը, իսկ երկրորդ մասի հատվածը վերցված կ «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորից:

Նկատի ունենալով, որ «Սալբի» վեպում Բաֆֆու «Հնաձևությունները» Աննա Բաֆֆին փոխել է նոքա դարձնելով նրանք և նոցան — նրանց, միաժամանակ հաշվի առնելով, որ հեղինակը օգտագործում է, թե՛ մեկը և թե՛ մյուսը, բարվոք համարվեց միակերպության համար պահպանել այդ դերանունների գրության աշխարհաբար ձևը:

ՊԱՏ Մ4ԾՔՆԵ Բ

1872 թվականին Գ. Արծրունին Բաֆֆուն հրավիրում է մասնակցել նոր հրատարակվող «Մշակ» շաբաթաթերթի աշխատանքներին: «...Դուք աշխարհ տեսած մարդ եք, — գրում է նա, — արևելքը ճանաչում եք: Դուք բնիկ պարսկաստանցի եք և պտտել եք Թուրքահայաստանը, տվեք մեզ թարմ նյութեր այդ երկրների մասին...»:

Մասնակցելով «Մշակի» հրատարակմանը, Բաֆֆին միայնց հետևից տպագրում է «Պարոն Բաֆֆիի ուղևորությունից» նամ ակաշարը՝ Ալեքսանդր Բաֆֆի և

ապա միայն Բաֆֆի ստորագրությամբ: Զուգահեռ դրան, նա Մելիքզադե ստորագրությամբ սկսում է հրատարակել նաև գեղարվեստական ստեղծագործություններ «առնված Պարսկաստանի» կյանքից: 1872 թվականին «Մշակում» հաջորդաբար տպագրվում են՝ «Գեղեցիկ Վարթիկը», «Սով», «Կուսագրություն» և «Անբախտ Հոփսիսիմեն» պատմվածքները, այնուհետև 1873 թվականին «Մի օրավար հողը» և այլն:

«Մեզնից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել — Պարս — կաստանի հայերի դրության վրա, — գրում է Բաֆֆին «Վիպագրությունը ռուսա-հայերի մեջ» հոդվածում (տե՛ս Բաֆֆի «Երկերի ժողովածու», հատ. 10, էջ 155), — մենք նկարեցինք նրանց աննախանձելի կյանքի

պատկերը, երբ գրեցինք «Գեղեցիկ Վարթիկը», «Սովը», «Կուսագրությունը», «Անբախտ Հոփսիսին», «Մի օրավար հողը» և այլն:

1874 թվականին Բաֆֆին տպագրում է «Փունջի» երկրորդ հատորը, ուր հրապարակ են գալիս մի քանի նոր վիպակներ ու պատմվածքներ՝ «Ուխտյալ միանձնուհին», «Տնային Փեսան» և այլն, որոնց թեման այս անգամ ոչ թե Պարսկաստանն էր, այլ Թիֆլիսի հայերի կյանքը: Այս պատմվածքների շնորհիվ Բաֆֆին իր շուրջն է համախմբում ընթերցողների մի սովոր բազմություն, ինչպես նաև վաստակում է թշնամիներ, որոնք ամեն կերպ ձգտում են վարկաբեկել նրան ժողովրդի աչքում: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ «Մասիս» շաբաթաթերթի թղթակից Պ. Տ.-ն. «... Այս կյանքի պատկերներու (պատմվածքների) պատճառով ունեցավ շատ ռիսերիմ թշնամիներ ազնվական դասեն և մի հայ ազնվական «Ուխտյալ միանձնուհի» նորավեպի համար Բաֆֆիի երդվյալ թշնամին դարձավ, այնպես որ ոճրագործության գաղափարն իսկ հղացավ» (տե՛ս «Մասիս», 1886 թ., էջ 678),

Բաֆֆու այս պատմվածքների մասին մեծ հիացմունքով է խոսում նաև «Մեղու Հայաստանի» թերթի թղթակից Հայկունին, որը հետագայում դարձավ Բաֆֆու և նրա ստեղծագործությունների երդվյալ թշնամին (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1881 թ., M 183):

Այս պատմվածքները, որոնց քանակը կրկնապատկվում է հեղինակի հետո — գա ստեղծագործական կյանքի ընթացքում, իրենց թեմատիկ միասնությամբ հանդիսանում են մի գեղեցիկ փունջ Բաֆֆու գրական ժառանգության մեջ: Այդ բանը առիթ է հանդիսացել Բաֆֆու երկերի թարգմանիչների ու հրատարակիչների համար նրա այս ստեղծագործությունները ամփոփելու «Պարսկական պատկերներ» և «Պատկերներ» ընդհանուր խորագիրն ունեցող ժողովածուների մեջ: Այս վերնագրով նրա վեպիկներն ու պատկերները և ակնարկները հրատարակվել են ռուսերեն, վրացերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և լեհերեն,

ԳԵՂԵՑԻԿ ՎԱՐԹԻԿԸ — Առաջին անգամ տպագրվել է «Մշակում» 1872 թվականի հունիսի 1-ին և 8-ին, 21-րդ և 22-րդ համարներում: Հեղինակի մահվանից հետո տպագրվել է Թիֆլիսում 1891 թվականին «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում: 1902 թ. այս և «Բիբի Շարաբանի» պատմվածքները Աբգար Հովհաննիսյանի ֆրանսերեն թարգմանությամբ տպագրվում են Փարիզում «Contes persns.» (պարսկական պատկերներ) ընդհանուր վերնագրով: Այնուհետև «Գեղեցիկ Վարթիկը» տպագրվել է «Պարսկական պատկերներ» (1913 թվականին Վիեննա)

Ժողովածուի մեջ, Մեր օրերում առաջին անգամ տպագրվել է 1941 թվականին : Հայ պետհրատի մանկապատանեկան գրականության բաժնի կողմից հրատարակած «Չորս պատմվածք» գրքույկում, որից հետո՝ Բաֆֆու Երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում: Ավելի ուշ՝ 1955 թվականին այս պատմվածքը հրապարակվել է հեղինակի երկերի տասհատորյակի առաջին հա-ատորում:

ԿՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ — Առաջին անգամ տպագրվել է «Մշակում», 1872 թվականի հոկտեմբերի 26-ին, 42-րդ համարում: Այնուհետև՝ 1893 թվականին «Վեպիկներ և պատկերներ» գրքի երկրորդ հատորում: 1912 թվականին այս պատմվածքը «Кзязан » վերնագրով Հ. Սարգսյանի թարգմանությամբ տպագրվում է «Армянская литература» ժողովածուում: Ապա տպագրվել է նաև «Պարսկական պատկերներ» ժողովածուի մեջ: Մեր օրերում առաջին անգամ տպագրվել է

Բաֆֆու երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում: Ինչպես նաև տեղ է գտել հեղինակի երկերի տասհատորյա ժողովածուի առաջին հատորում (Երևան, 1955 թ.):

ԱՆԲԱԽՏ ՀՌԻՓՄԻՄԵՆ — Տպագրվել է «Մշակում» 1872 թվականի նոյեմբերի 9-ին և 16-ին, 44 և 45-րդ համարներում, այնուհետև՝ 1891 թ. «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում, ապա լույս է տեսել «Պարսկական պատկերներ» (Վիեննա, 1913 թ.) ժողովածուի մեջ: 1891 թվականին վրացերեն լեզվով Տեր-Դավթյանի թարգմանությամբ տպագրվում է Բաֆֆու ստեղծագործություններից մի քանիսը, որոնց թվում նաև «Անբախտ Հռիփսիմեն» պատմը-վածքն է: 1912 թվականին այս պատմվածքը «Несчастливая Рипсиме» վերնագրով Հ. Սարգսյանի թարգմանությամբ տպագրվել է «Армянская литература» ժողովածուում: Մեր օրերում առաջին անգամ տպագրվել է 1941 թվականին, Հայպետ-հրատի մանկապատանեկան գրականության բաժնի կողմից հրատարակված «Չորս պատմվածք» գրքույկում, որիք հետո Բաֆֆու Երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում: 1953 թվականին այս պատմվածքը Հ. Խաչատրյանի թարգմանությամբ տպագրվում «Армянские рассказы» ժողովածուի առաջին գրքում: Ավելի ուշ՝ 1955 թվականին այս պատմվածքը տպագրվել է հեղինակի երկերի տասհատորյակի առաջին հատորում, ինչպես նաև տեղ է գտել է «Պատմվածքներ» ժողովածուում (Երևան, 1961 թ.):

Մի ՕՐԱՎԱՐ ՀՈՂ — Լույս է տեսել «Մշակում» 1873 թվականի մարտի 22-ին, 17-րդ համարում: Ապա՝ 1891 թվականին «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում: 1897 թվականին այս պատմվածքը «Полоса земли» վերնագրով տպագրվել է «литнаучный сборник» տարեգրքի առաջին հրատարակության մեջ: 1900 թվականին նույն անունով տպագրվում է «Кавказский вестник» ամսագրի 3-րդ համարում: Տպագրվել է նաև «Պարսկական պատկերներ» ժողովածուում (Վիեննա, 1913 թ.): Մեր օրերում առաջին անգամ տպագրվել է 1927 թվականին Պետհրատի կողմից հրատարակված «Ոսկի աքաղաղ» վեպին կից, այնուհետև՝ 1941 թվականին Հայպետհրատի մանկապատանեկան բաժնի հրատարակված «Չորս պատմվածք» գրքույկում, որից հետո՝ Բաֆֆու Երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում: 1953 թվականին այս պատմը վածքը «Надел» անունով տպագրվել է «Армяхские рассказы» ժողովածուի առաջին գրքում Հ. Խաչատրյանի թարգմանությամբ: Այս պատմվածքի հաջորդ հրատարակությունը տեղի է ունեցել 1955 թվականին, երկերի տասհատորյա ժողո — վածուի առաջին հատորում, ինչպես նաև տեղ է գտել հեղինակի «Պատմվածքներ» խորագրով գրքույկում (Երևան, 1961 թ.):

ՈՒԽՏՅԱԼ ՄԻԱՆՁՆՈՒՇԻՆ — Առաջին անգամ տպագրվել է 1874 թվականին Թիֆլիսում, «Փունջի» երկրորդ հատորում: 1890 թվականին «Донская пчела» թերթը իր 47-րդ համարից սկսում է տպագրել «Ուխտյալ միանձնուհու» ռուսերեն թարգմանությունը «Монархиня по не воле» վերնագրով: Այնուհետև 1893 թվականին «Обреченная» վերնագրով տպագրվել է Յուրի Վեսելովսկու և Մ. Բերբերյանի խմբագրած «Армянские беллетристы» ժողովածուի առաջին հատորում: 1893 թվականին այս պատմվածքը տպագրվել է «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում: Մեր օրերում տպագրվել է Բաֆֆու Երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում: 1955 թվականին այս պատմվածքը տպագրվել է հեղինակի տասհատորյա ժողովածուի առաջին հատորում, ինչպես նաև տեղ է գտել պատմվածքներ ժողովածուում (Երևան, 1961 թ.):

ՏՆԱՅԻՆ ՓԵՍԱ — Լույս է տեսել Թիֆլիսում 1874 թվականին «Փունջի» երկրորդ հատորում: Ապա հեղինակի մահվանից հետո այն լույս է տեսել 1891 թվականին «Վեպիկներ և պատկերներ» գրքի առաջին հատորում: Մեր օրերում տպագրվել է Բաֆֆու Երկերի 1949 թվականի հրատարակության առաջին հատորում: 1955 թվականին այս պատմվածքը տպագրվել է հեղինակի երկերի ժողովածուի տասնհատորյակի առաջին հատորում (Երևան, 1955 թ.):

Պատմվածքներից վերջին երկուսը՝ «Ուխտյալ միանձնուհին» և «Տնային փեսա», ինչպես վկայում է հեղինակը «Փունջի» երկրորդ հատորի առաջարա-նում, գրվել են Թիֆլիսում 1872 — 1873 թվականներին, իսկ ինչ վերաբերում է պարսկահայության կյանքին վերաբերող պատմվածքներին, ապա համապատասխան վկայությունների բացակայության պատճառով ստույգ կերպով հնարավոր չէ ասել Բաֆֆին դրանք Թիֆլիսում և՛ է գրել, թե՛ Սալմաստում: Թեև Ավթան-դիլյանը նշում է, որ ինքը 1862 — 1867 թվականներին Թավրիզում «շատ անգամ հանդիպել է Բաֆֆուն», որը «իր հետ շալակած ման էր ածում իր գրական աշխատությունները» — այնուամենայնիվ, ամենից հավանականն այն է, որ այդ պատմվածքները նա նույնպես գրել է 1872 թվականին Թիֆլիսում: Այդ բանը հաստատող փաստերից մեկն էլ դրանց ժանրը և ուղղությունն է, որը համապատասխանում է թերթի ծավալին և բնույթին: Մյուս կողմից, Պարսկաստանի հայտնի սովը, որին առանձին հողվածով անդրադարձել է ինչպես «Մշակը», այնպես էլ մյուս թերթերը, տեղի է ունեցել 1872 թվականին, երբ Բաֆֆին արդեն Թիֆլիսումն էր և հենց նույն օրերին էլ «Մշակում» հրատարակում է իր նույնանուն պատմվածքը:

Այս հատորում տեղադրված են Բաֆֆու այն ստեղծագործությունները, որոնք ժամանակագրական առումով կապված են Բաֆֆու վաղ շրջանի գործունեության հետ, միաժամանակ նկատի է առնված տվյալ շրջանի ստեղծագործությունների թեմատիկ և ժանրային միասնությունը:

Մի շարք պատմվածքներ, որոնք նույնպես պետք է տեղադրվեին այս հատորում, ծավալի պատճառով դուրս են մնացել և կհրատարակվեն համապատասխան հատորներում:

Պատմվածքների տեքստը տպագրության պատրաստելիս կազմողները հիմք են ընդունել հեղինակի կենդանության ժամանակ եղած հրատարակությունները: